

1450

9(37)

Մ-71

Ա. Վ. ՄԻՇՈՒԼԻՆ

ՍՊԱՐՏԱԿԻ ՎԵՐՋԻՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ  
ՅԵՎ ՆՐԱ ՄԱՅԸ

1

—

19 AUG 2005  
30 MAY 2011

ՀԻՍՏ. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

№ 27

Հ Ե Ռ Ա Կ Ա Ո Ւ Ս Ո Ւ Ց Մ Ա Ն Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

№ 27

9(37)

Մ-78

Ա. Վ. ՄԻՇՈՒԼԻՆ

այ

11818  
57-9

ՍՊԱՐՏԱԿԻ ՎԵՐՋԻՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ  
ՅԵՎ ՆՐԱ ՄԱՋԸ

(Ոժանդակ նյութեր հեռակայողներին)

1305

1 JUL 2013  
DUA

1450



1406  
46

Գատ. խմբագիր՝ Ս. ԳԱՐՐԻԵԼՅԱՆ  
Թարգմ. Մ. ԶԱՔԱՐՅԱՆ  
Սրբագրիչ՝ ԳԱՐ. ՀԱԿՈՒՅՑԱՆ  
Գլավկա Կ—8238 հրատ. № 14  
պատվ. № 33 տիրած 1000  
Հանձնված է արտագրության 13 մայիսի 1937 թ.  
Ստորագրված է ապելու 19 մայիս 1937 թ.  
Ուսուցիչների վերակազմման կնոտիտուտի ապարան,  
Յեքեան, Մարքսի փողոց 17

Ստրկութեան պատմութեանը գիտի շատ տառ-  
նամյակներ տեղ պատերազմներ՝ ստրկութեանից  
ազատագրվելու համար... Սպարտակը յեղեյ և սրանից  
մոտ յերկու հազար տարի առաջ տեղի ունեցած՝  
ստրուկների ամենախոշոր ապստամբութեաններից  
մեկի ամենաականավոր հերոսներից մեկը: Մի շարք  
տարիների ընթացքում, ամբողջովին ստրկութեան  
վրա հիմնված և կարծես թե ամենակարող հռոմեյա-  
կան կայսրութեանը ցնցումներ ու հարվածներ եր  
կրում ստրուկների հակայական ապստամբութեանից,  
վրոնք ղենվեցին ու համախմբվեցին Սպարտակի  
առաջնորդութեամբ, կազմելով անաղին բանակ  
Ս60ր. Սօր Կ 24 371. Լենին):

Սպարտակն ամբողջ հին պատմութեան բախ-  
րուն մարզն է: Մոշոր զորավար (վոչ Գարեբալդե),  
ազնիվ բնավորութեան, հին պրոլետարիատի խեղա-  
կան ներկայացուցիչ:

Մարքս. Եամակ Եճգիսիճ, 1861 թ. 27/2:

### 1 ՍՊԱՐՏԱԿՅԱՆ ԱՊՍԱՄԲՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Հին Հռոմի ստրուկների սպարտակյան ապստամբութեան  
դյուցադներգութեանն անտիկ շրջանի սոցիալական պատմու-  
թեան գունագեղ և դրամատիկական եպիգրաֆներից մեկն է:  
Սպարտակն ստրկաակերբի դեմ մղած իր հերոսական պայքարով  
դրոշմված և անտիկ հեղինակների շատ վկայութեաններով, վո-  
րոնք, ղժբախտաբար, դեռ քիչ են ուսումնասիրված մինչև այժմ:  
Այս բոլոր տվյալները վկայում են մի արտասովոր փաստի վե-  
րաբերյալ վոչ միայն Հռոմի, այլև հին աշխարհի ամբողջ պատ-

մության համար: Սպարտակն սկսեց «Հոռմի համար սարսափելի ու վտանգավոր պատերազմ<sup>1)</sup>»: (Ֆովերոս ավթիս ոփիլիմոս) Հաննիբալի նման նա կանգնած էր Հոռմի դռներին (quam Hannibal circa portas<sup>2)</sup>) և իր արշավանքներով անցավ հռոմեական հանրապետության տերիտորիայի յերկարությամբ ու լայնությամբ, այնպես վոր ամբողջ Իտալիան, Ամպելիոսի արտահայտությամբ, բոլորովին ամայացած էր (populata prope tota Italia<sup>3)</sup>):

Ստրկատիրական Հոռմի պատմաբաններն ու հրապարակախոսներն Սպարտակի ապստամբության լուսաբանությանը մոտենում էյին, իհարկե, իրենց դասակարգի տեսակետից, բայց այն հանգամանքը, վոր Սպարտակի հետ պատերազմելը (bellum Spartacium) նրանք համարում էյին վտանգավոր, համեմատում էյին Սերտորիանական և Միհրդատյան պատերազմների հետ, իսկ Սալլյուստիոսը<sup>4)</sup>, վոր գրել է պատերազմի մասին, ստիպված էր նրան նույնիսկ յերկու գիրք նվիրելու,— արդեն շատ բան է ասում: Միանգամայն ակներև է, վոր հռոմեական պատմաբանները չէյին կարող թագցնել թեկուզ սպարտակյան ապստամբության թափի լայնությունն ու նրա սոցիալական նշանակությունը: Յեզ հենց այս է մեզ համար արտասովոր չափով կարևոր, վորովհետև այսպիսով լույս է սփռվում սարուհների ապստամբության նշանակության վրա Հոռմի համար շատ բարդ սիտուացիայի մի շրջանում՝ ներքին դասակարգային պայքարի և արտաքին ընդհարումների մեջ առաջացած բավական բարդությունների շրջանում:

Այս բոլորով հանգերձ՝ մի ամբողջ շարք հարցեր, Սպարտակի պայքարի առանձին եպիզոդներ, նրա շտաբում յեղած տարածայնությունների մանրամասներ մեզ համար մութն են մնում նյութի պակասության պատճառով: Դասակարգային նա-

1) App. Historia Romana, 1 հ., էջ 118,5 Լայպցիգի 1781 թ. հրատ.:

2) Oros., Hist. adv pagan., 5, 24, տես նաև Eutrop. Brev. Hist., Rom., էջ 110, Մոսկվա, 1809:

3) Ampelius, Liber memorialis, XLV.

4) Սալլյուստիոսի այս գրքերը, զժբախտաբար, մեզ հասել են Ֆրագմենտներով: Տես Sallust Hist. bell., 3, 4, fr. 90—106 4, 2 fr. 20—41 Maurenbrecher-ի հրատ., Լայպցիգ, 1891.

խապաշարմունքը, ծայրահեղ ասելությունը ղեպի Սպարտակը, այստեղից էլ Սպարտակի ապստամբության հետ կապված անցքերի հետևողականությունն ու ստուգությունը նկարագրելու մեջ անխնամ վերաբերմունքը,— այս բոլորն, իհարկե, խանգարում էր ստրկատիրական Հոռմի պատմաբաններին ու հրապարակախոսներին մանրամասն և ստույգ տեղեկություններ տալու Սպարտակի մասին:

Մենք հնարավորություն չունենք կանգ առնելու հռոմեական այն առանձին հեղինակների հայացքների ու տրամադրությունների վրա, վորոնք մեզ տեղեկություններ են թողել իտալական սարուհների առաջնորդի մասին: Հողվածի շրջանակները մեզ թույլ չեն տալիս զբաղվելու նաև այն բանի վերլուծությամբ, թե հեղինակներն ինչ ավյալներից կարող էյին ոգավել մեզ տեղեկություններ հաղորդելիս: Մա հասուկ խնդիր է: Մեզ հետաքրքրում են բուն սպարտակյան ապստամբության չպարզված հարցերը, նրանցից շատերն արդեն քննարկվել են գրականության մեջ, իսկ մեծամասնությունը չի բարձրացվել նույնիսկ իբրև հարց:

Որինակ՝ աղբյուրներում տարամտություն կա Սպարտակի՝ հռոմեական առաջին հակառակորդի հարցի վերաբերյալ: Ապպիանոսը գտնում է, վոր Սպարտակի ղեմ գուրս յեկած հռոմեական առաջին գորավաբը Վարինիյ Գլաբոն է, Պլուտարքոսն ասում է՝ Պրետոր Կլոդիոն էր, Սալլյուստիոսը՝ Վարինին: Աղբյուրների այս տարամտությունները ջանում էր համաձայնեցնել ղեռ Մյունցերը<sup>1)</sup>:

Մեզ հայտնի յե նմանապես, վոր գրականության մեջ էլ ավելի կարևոր հարց էր զբված՝ Սպարտակի ապստամբության սկզբնավորության մասին: Այս հարցի վերաբերյալ գոյություն ունեն շատ ասրբեր վերսխաներ, վորոնց վերլուծումով զբաղվել է ղեռ Շամբախը<sup>2)</sup>: Այս հարցի վրա կանգ ենք առել նաև մենք՝ Սպարտակի վերաբերյալ մեր աշխատության մեջ<sup>3)</sup>: Հանգես գաղով

1) Der erste Geqner des Spartacus, philologus, 55, հ., 1897.

2) O. Schambach, Der ialische sclavenaufstand, 1872.

3) Ա. Վ. Միշոուլի Սպարտակի ապստամբությունը Հին Հոռմում, Известия ГАИМК, պրակ 76, 1934.

Շամբախին համերաշխ, բայց նոր փաստարկուծով, մենք 74  
թվականը հաստատեցինք իբրև ստրուկների շարժման սկիզբը:

Շատ թե քիչ պարզ և Սպարտակի և նրա ողնականների  
միջև ծագած տարածաշնությունների պատճառների հարցը և  
շարժման ծրագրի հարցը: Մի այլ տեղ յես տոբիթ ևմ ունեցել  
մանրամասն կանգ առնելու սրա վրա<sup>1)</sup>: Կան մի շարք անորոշ  
հարցեր ևլ, ինչպես, որինսակ, այն, թե ինչ հանգամանքներում  
սղանվեց Ենոմայը: Արդյոք իսկապես նա Սպարտակից հեռա-  
ցավ տարածաշնությունների հողի վրա, ինչպես ավելի ուշ արեց  
Կրեկը՝ ստրուկների առաջնորդի մյուս ողնականը: Հարցը հա-  
մենայն դեպս պահանջում է հետագա նույնպիսի հետազոտու-  
թյուն, ինչպես, որինսակ, մինչև այժմ չպարզված այն հարցը,  
թե ինչ պատճառներով Սպարտակն Ալպերից վերադարձավ Իտա-  
լիայի հարավը: Ամենից հավանականն այն է, վոր այս վերջին  
հարցը նմանապես կապված է սղատամբների բանակում յեղած  
տարածաշնությունների հետ, վոր վերաբերում էլին պայքարի  
ուղղությանը, արշավանքների պլանին և ապստամբության վերջ-  
նական խնդրին: Սրա ոգտին և խոսում բոլոր հետագա տարա-  
ձայնությունների զարգացումը:

Սակայն, այս բոլոր հարցերն այսպես թե այնպես քննարկ-  
վել են:

Հարցերի մյուս խումբը դեռևս չի յենթարկվել հետազո-  
տության, և մենք կփորձենք ձևակերպել զրանք: Ամենից տուժ  
հարկավոր է ասել, վոր սրանք գլխավորապես այնպիսի հարցեր  
են, վորոնք կապված են ապստամբության առանձին մանրա-  
մասնությունների հետ: Սրան և վերաբերում, որինսակ, կանոնց  
մասնակցության հարցը ստրուկների ապստամբության, վորի  
մասին աղբյուրներում ուղղակի ցուցումներ չկան: Միայն Պլու-  
տարքոսի մոտ մի տեղ վկայություն կա, վոր Սպարտակի հետ  
միասին փախավ նրա ցեղակից մի կին, վորը դարձավ նրա  
կինը<sup>1)</sup>, Պլուտարքոսը մի այլ տեղում հաստատում է, վոր Սպար-  
տակի բանակում կանայք կային: Պլուտարքոսը գրում է յերկու  
կնոջ մասին, վորոնք նկատել են Կրասոսի զորախմբի հար-

1) Տես նախընթաց ծանոթագրությունը:

1) Plut. Crass., 8:

ձակման պարաստությունն Սպարտակից անջատված Գաննիկի  
և Կաստի զորքերի վրա<sup>1)</sup>:

Մյուս հետաքրքրական հարցը կարելի յեր ձևակերպել  
այսպես, ստրուկների համախառնական ապստամբության մեջ  
ինչ չափով էլին մասնակցում քաղաքային, արհեստագործ  
ստրուկները: Այս հարցը ծագում է աղբյուրներում յեղած հե-  
տևյալ հակասությունների առնչությամբ. Ապալիանոսի մոտ  
մի ցուցում կա, վոր վոչ մի քաղաք չհարեց Սպարտակին<sup>2)</sup>:  
Մյուս կողմից հայտնի յե, թե վորքան շատ քաղաքներ էլին  
զբաղվում ստրուկները: Մետապոնտ, Նորա, Յերուրում, Կոնսան-  
ցիա, Պիցինաիա, Ռեդիոն, Մուտինա և այլ քաղաքներն Սպար-  
տակի կողմից գրավվելուց հետո նրա զորքը լրացնում էլին թե  
մարդկային ռեսուրսներով և թե նյութական միջոցներով: Այ-  
նուհետև, յեթե Սպարտակի բանակում գենք էլին պատրաստում<sup>3)</sup>  
և սրա համար մասնավորապես մետաղ էլին մշակում, ապա չե՞  
վոր սա անտարակույս նշում է նրա զորքի մեջ արհեստագործ  
ստրուկների ներկայությունը, վորոնք հավաքարկվում էլին  
հատկապես քաղաքներում:

Վերջապես, հարկավոր է հարց դնել Սպարտակի յերրորդ և  
վերջին արշավանքի մասին դեպի Բրունդիզի: Թեև այս հարցը  
մենք շոշափել ենք մեր աշխատության մեջ<sup>4)</sup>, բայց այն հար-  
կավոր է այժմ ավելի զարգացնել, վորովհետև այն կապված է  
էր՝ իսկ Սպարտակի մահվան հանգամանքների հետ: Իսկ Սպար-  
տակի մահվան հարցը մեզ համար արտասովոր չափով հետա-  
քրքրական է: Սրա լուծման համար մենք այժմ նոր վավերագիր  
ենք ստացել: Սա Պոմպեյի վորմնանկարի մի Ֆրագմենտ է՝ գտնը-  
ված 1927 թ. պեղումների ժամանակ:

Այս նոր հարցերի խմբից յես կդատեմ վերջինս, այսինքն  
Սպարտակի վերջին արշավանքի և նրա մահվան հանգամանք-  
ների հարցը: Այս և պարտագրում մեզ նոր վավերագրի հանդես  
գալը: Ժամանակին յես տոբիթ ևմ ունեցել վկայակոչելու այս

1) Plut., Crass., 11.

2) App., 1, 117, 25.

3) App., 1. վերջը:

4) Հիշատակված աշխ., էջ 149:

վաճերագործը (դեռևս 1929 թ. Կոմունիստական ակադեմիայում զեկուցելիս): Սակայն նրա վրա քիչ ուշադրութուն դարձվեց, և նա համարյա թե հնյանի չե խորհրդային ընթերցողին:

## 2 ՍՊԱՐՏԱԿԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԴԵՊԻ ԲՐՈՒՆԴԻՋԻ

Չնայած Մպարտակի հերոսական ջանքերին՝ նրան չհաջողվեց ազատագրված ստրուկներին Ռեգիոնից փոխադրել Միցիլիա<sup>1)</sup>, իսկ այնտեղից՝ հայրենիք: Ինչպես հայտնի չե, բուրբերը խանդարեցին իրագործելու ստրուկների փոխադրումն ինքնագործ լաստանավերով: Այսպիսի պայմաններում ստրուկների առաջնորդի մեջ հասունանում և արշավանքի նոր պլան: Սպարտակը, հարավում կարված լինելով մնացած Իտալիայից Կրասոսի շինած փոսով, ցանկապատով ու պատով և պարենի պակասութուն զգալով, ստեղծեց հետագա պայքարի նոր պլան: Այս պլանն ակներևորեն տարածայնութուններ առաջացրեց: Սակայն Սպարտակը պնդում և իրենը, և, ինչպես մենք զիտենք, այն ժամանակ Սպարտակից պառակտվում են զորախմբեր՝ Գաննիկի և Կաստի զեկավարությամբ<sup>2)</sup>:

Իսկ Ինչպիսի պլան էր Սպարտակի այս նոր, յերրորդ արշավանքի պլանը: Այս պլանն էր՝ պատուելով շրջապատող ողակը և ուժեր հավաքելով, զիմել զեպի Բրունդիզի նավահանգիստը: Բրունդիզին մեծ նավահանգիստ և Ազրիատիկ ծովում, զեղեցիկ ծովախորշ ունի, վորտեղ կանգ էյին առնում հունական բազմաթիվ նավեր: Ամեն տեսակ քամու ժամանակ նավահանգիստը հարմար էր նավերի համար. Հունաստանի հետ կապվելու մերձավոր կետն էր Դիբրախիում (Նպիդամն) նավահանգստի միջոցով, վոր գտնվում էր Բրունդիզիի զիմաց, Ազրիատիկ ծովի մյուս կողմում Իլլիրիայում, ընդամենը 175 հոմեյական մղոն հեռավորության վրա: Բացի սրանից, Բրունդիզին Կապուանի ճանապարհով (via Appia), վոր հետագայում հասցվեց մինչև այս նավահանգիստը, կապվում էր Հռոմի հետ: Սպարտակի համար ակներև էր այս չափազանց կարևոր կետի գրավման նշանակութունն ստրուկներին Հունաստան փոխադրելու համար: Այնտեղ

նա մշտապես կարող էր և՛ հունական նավեր ձարել, այդտեղից էր և՛ ամենակարճ տարածութունը մինչև Հունաստան, և հենց նավահանգիստն էլ իր սաղմագիտական նշանակությամբ չափազանց կարևոր էր, հանդիսանալով մի միացնող կետ Հունաստանի և Հռոմի միջև: Այս բոլորը, ակներև և, հաշվի չեր առել սպարտամբ ստրուկների առաջնորդը, և նա, Սպարտանոսի արտահայտությամբ, «վճուեց սիսկի զիմել և ուզեորվեց զեպի Բրունդիզի»<sup>1)</sup>:

Վճրն էր այս յերրորդ արշավանքի ճանապարհը: Ի՞նչ զբժվարութուններ էր հետ էր կապված նրա իրականացումը: Ի՞նչ ճակատամարտեր պիտի կրեր Սպարտակը, և վճրն և այս արշավանքի արագիկ վախճանի պատճառը: Մեր ազդյուններում յեղած համեմատաբար աղքատիկ ավյալներով մենք մասամբ կարող ենք վերականգնել Բրունդիզիի արշավանքի պատկերը:

Միցիլիա փոխադրվելու անհաջողությունից հետո Սպարտակն ամենից առաջ պետք է դուրս պրծներ թշնամու ողակից: Սրա համար դորահավաքվում են ստրուկների բոլոր ուժերը, — այս նպատակն իրագործելիս հանգես և գալիս նրանց արտասովոր համառութունը և բացառիկ խիզախությունն ու սրամտությունը: Ստրուկներն այդ ժամանակ գտնվում էյին Բրուտաիայի «թակարգում»: Այնտեղից դուրս պրծնելու համար ստրուկներն սկսում են ծառերից պատրաստած վառվող ջահեր նետել Կրասոսի փորած փոսի մեջ, վոր Սպարտակին անջատում էր հյուսիսից, մշտական անհանգստութուն պատճառելով թշնամուն: Առաջին շրջանում սա համենայն զեպս պահպանում էր Սպարտակի դուրքի բարոյական վորոշ մակարդակը, հնարավորութուն էր տալիս պայքարի նախաձեռնությունը պահել իր ձեռքում: Ծանր զրության մեջ՝ Բրուտաիայի թակարգի պայմաններում սա նույնիսկ կարող էր ապահովել հարձակման տակալիկայի կիրառումը, իբրև ինքնապաշտպանության լավագույն միջոցի:

Վերջապես, փոքր լցնելով ծառերով, ճյուղերով, իսկ ըստ Ֆրոնտինի<sup>2)</sup>, նաև այս նպատակով սպանված զերիների ու իր հեծելազորի ձիերի զիտկներով՝ Սպարտակը ճեղքեց Կրասոսի ամրությունները, փոսի վրայով իր զորքը հանեց ողակումից

<sup>1)</sup> App., 1, 118—119. Plut. Crass., 10. Flor., 3, 90.

<sup>2)</sup> Plut., Crass., 11.

<sup>1)</sup> App., B., 1, 120.

<sup>2)</sup> Front., Strat., 1, 5, 20.

վավերագրերը (գեռես 1929 թ. Կոմունիստական ակադեմիայում գեղեցեցիկ): Սակայն նրա վրա քիչ ուշադրություն դարձվեց, և նա համարյա թե հնչյունի չէ խորհրդային ընթերցողին:

## 2 ՍՊԱՐՏԱԿԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԴԵՊԻ ԲՐՈՒՆԴԻՁԻ

Զնայած Սպարտակի հերոսական ջանքերին՝ նրան չհաջողվեց ազատագրված ստրուկներին մեղիոնից փոխադրել Սիցիլիա<sup>1)</sup>, իսկ այնտեղից՝ հայրենիք: Ինչպես հայտնի չէ, բուրբերը խանդարեցին իրագործելու ստրուկների փոխադրումն ինքնագործ լաստանավերով: Այսպիսի պայմաններում ստրուկների առաջնորդի մեջ հասունանում է արշավանքի նոր պլան: Սպարտակը, հարավում կտրված լինելով ֆուսցած Իտալիայից Կրատսի շինած փոսով, ցանկապատով ու պատով և պարենի պակասությամբ զգալով, ստեղծեց հետագա պայքարի նոր պլան: Այս պլանն ակնհերեորեն տարածայնություններ առաջացրեց: Սակայն Սպարտակը պնդում է իրենը, և, ինչպես մենք պիտենք, այն ժամանակ Սպարտակից պառակտվում են զորախմբեր՝ Գաննիկի և Կաստի գեկավարությամբ<sup>2)</sup>:

Իսկ ինչպիսի պլան էր Սպարտակի այս նոր, յերրորդ արշավանքի պլանը: Այս պլանն էր՝ պատռելով շրջապատող ողակը և ուժեր հավաքելով, դիմել դեպի Բրունդիզի նավահանգիստը: Բրունդիզին մեծ նավահանգիստ է Ադրիատիկ ծովում, գեղեցիկ ծովախորշ ունի, վորտեղ կանգ էյին առնում հունական բազմաթիվ նավեր: Ամեն տեսակ քամու ժամանակ նավահանգիստը հարմար էր նավերի համար. Հունաստանի հետ կապվելու մերձավոր կետն էր Դիրրախիում (Նպիդամն) նավահանգստի միջոցով, վոր գտնվում էր Բրունդիզի դիմաց, Ադրիատիկ ծովի մյուս կողմում՝ Իլլիրիայում, ընդամենը 175 հոմեյական մղոն հեռավորությամբ վրա: Բացի սրանից, Բրունդիզին Կապուանի ճանապարհով (via Appia), վոր հետագայում հասցվեց մինչև այս նավահանգիստը, կապվում էր Հոմի հետ: Սպարտակի համար ակներև էր այս չափազանց կարևոր կետի զրավման նշանակությունն ստրուկներին Հունաստան փոխադրելու համար: Այնտեղ

1) App., 1, 118—119. Plut. Crass., 10. Flor., 3, 90.

2) Plut., Crass., 11.

նա մշտապես կարող էր և՛ հունական նավեր ճարել, այդտեղից էր և՛ ամենակարճ ասարածությունը մինչև Հունաստան, և հենց նավահանգիստն էլ իր ուղիմաղիտական նշանակությամբ չափազանց կարևոր էր, հանդիսանալով մի միացնող կետ Հունաստանի և Հոմի միջև: Այս բոլորը, ակներև է, հաշվի չեր առել սպարտաժողովի ստրուկների առաջնորդը, և նա, Սպարտակի արտահայտությամբ, «վճուկ սխեի դիմել և ուղևորվեց դեպի Բրունդիզի»<sup>1)</sup>:

Վերջն էր այս յերրորդ արշավանքի ճանապարհը: Ինչ զրգվարությունների հետ էր կապված նրա իրականացումը: Ինչ ճակատամարտեր պիտի կրեր Սպարտակը, և վերջն է այս արշավանքի արագիկ վախճանի պատճառը: Մեր աղբյուրներում յեղած համեմատաբար աղքատիկ տվյալներով մենք մասամբ կարող ենք վերականգնել Բրունդիզի արշավանքի պատկերը:

Սիցիլիա փոխադրվելու անհաջողությունից հետո Սպարտակն ամենից առաջ պետք է դուրս պրծներ թշնամու ողակից: Սրա համար դորահավաքվում են ստրուկների բոլոր ուժերը—այս նպատակն իրագործելիս հանգես է գալիս նրանց արտասովոր համառությունը և բացառիկ խիզախությունն ու սրամտությունը: Ստրուկներն այդ ժամանակ դանվում էյին Բրոտտիայի «թակարգում»: Այնտեղից դուրս պրծնելու համար ստրուկներն սկսում են ծանրից պատրաստած վառվող ջանքեր հետևել Կրատսի փորած փոսի մեջ, վոր Սպարտակին անջատում էր հյուսիսից, մշտական անհանգստություն պատճառելով թշնամուն: Առաջին շրջանում սա համենայն դեպս պահպանում էր Սպարտակի զորքի բարոյական վորոշ մակարդակը, հնարավորություն էր տալիս պայքարի նախաձեռնությունը պահել իր ձեռքում: Ծանր դրություն մեջ՝ Բրոտտիայի թակարգի պայմաններում սա նույնիսկ կարող էր սպահովել հարձակման տակտիկայի կիրառումը, իբրև ինքնապաշտպանություն լավագույն միջոցի:

Վերջապես, փոսը լցնելով ծանրով, ճյուղերով, իսկ ըստ Ֆրոնտինի<sup>2)</sup>, նաև այս նպատակով սպանված գերիների ու իր հեծելազորի ձիերի գիտկներով՝ Սպարտակը ձեղքեց Կրոտսի ամբողջությունները, փոսի վրայով իր զորքը հանեց ողակումից

1) App., B. 1, 120.

2) Front., Strat., 1, 5, 20.

և գլխովին Չարգեց Կրասոսի առաջին հանդիպած ջոկատները: Փայլուն կերպով կատարված այս գործողությունը, վոր հետաքրքրական և նաև ուղղակիան պատմագետի համար, խնամքով նախապատրաստված էր: Սպարտակը կարողացավ բարձրացնել իր զորքերի վագին և սարսափեցնել թշնամիներին: Ապպիանոսի տեղեկություններով<sup>1)</sup>, Սպարտակի հրամանի համաձայն, յերկու զորքերի միջանկյալ շերտում կախվել էր մի գերի հոռմեյացի. սա պետք է ցույց տար Կրասոսի զորքերին, թե ինչ է սպասում նրանց պարտություն գեպքում: Համապատասխան պատրաստությունից հետո, սպասելով ձյունոտ ու փոթորկալի գիշերը<sup>2)</sup> ստրուկները փայլուն կերպով կատարում են իրենց ուղղակիան գործողությունը:

Ի միջի այլոց, Հոռմի զորքերի հրամանատար Մ. Կրասոսը, վոր յերազում էր հաղթողի գափնինների մասին, վախեցավ Սպարտակի նոր արշավից գեպի Հոռմ: Իրեն ընդունակ չգտալով հաղթելու ապտամբ ստրուկներին, նա խնդրում է սենատին՝ Լուկուլոսին ոգնություն ուղարկել թրակիայից և Պոմպեոսին՝ Իսպանիայից<sup>3)</sup>: Յեղ Ապպիանոսի տեղեկություններով, Հոռմի սենատն ստրուկներին դեմ յերկրորդ գլխավոր հրամանատար է նշանակում Իսպանիայից հենց նոր վերադարձած Պոմպեոսին:

Թակարդից զուրս սրծած և Կրասոսի զորքի ավանգարդին Չարգած ստրուկները կարող էին անարդել շարժվել գեպի հյուսիս, Բրունդիզիի ճանապարհով, յեթե նրանց մեջ կրկին չսկրսվեցին անմիարանություններն ու տարածայնությունները: Մենք դիտենք, վոր այսպիսի տարածայնություններ տեղի յեն ունեցել նաև առաջ: Սրանք տարածայնություններ էլին շարժման պլանի ու ծրագրի հարցի վերաբերյալ: Ապտամբություն գեռ առաջին շրջանում ընկավ Ենոմայը՝ Սպարտակի մերձավոր ոգնականներից մեկը: Նա, ախներև է, պարտություն կրեց այն պատճառով, վոր անջատվեց իր առաջնորդից և հեռակեց իր սեփական պլանին: Սպարտակի յերկրորդ ոգնական Կրիկսը, ինչպես մեզ հաղորդում են աղբյուրները, պարտություն կրեց և ընկավ հոռմե-

<sup>1)</sup> App., 1, 119.

<sup>2)</sup> Plut., Crass., 10 (վերջը):

<sup>3)</sup> Plut., Crass., 11.

յական կոնսուլ Լյուցի Գելլի զորամասերից հենց այն պատճառով, վոր համաձայնություն չգտալով Սպարտակի գեպի Ալպերն արշավելու պլանի հետ, նույնպես անջատվեց գլխավոր ուժերից: Կրիկսը կերտեց ստրուկներին եքսպրոպրիացիայի և Հոռմի վրա անմիջականորեն արշավելու իր պլանը:

Այժմ նույնպիսի վեճ առաջացավ Սպարտակի յերրորդ արշավանքի մամանակ, յերբ նա ուղղվեց գեպի Բրունդիզի<sup>1)</sup>: Զորքերի մի մասը Գաննիկի և Կաստի ղեկավարությունում, ըստ յերևույթին, չհամաձայնելով Բրունդիզի արշավելու պլանի հետ և պահանջելով հարձակվել անմիջականորեն Հոռմի վրա, սկսեց հեռանալ Սպարտակից: Ինչ հիման վրա էլին գաղափարում այս տարածայնությունները մինչև վերջին արշավանքը: Վեճն է նրանց սոցիալական նշանակությունը:

Մոմղենն ասում է, թե այս տարածայնությունները տեղի էլին ունենում աղբյուրն յերկպատակություն հիման վրա<sup>2)</sup>, քանի վոր Սպարտակը միավորում էր հելլեններին, Կրիկսը, իսկ հետո Գաննիկն ու Կաստը՝ գալլերին ու գերմանացիներին, իսկ թե սրանք և թե մյուսները փոխադարձ թշնամանքի մեջ էլին:

Սակայն, փորձենք հետամուտ լինել այս տարածայնություններին նրանց. առաջին հատակ արտահայտություն մեջ, այն է՝ Սպարտակի և Կրիկսի տարածայնություններին: Մոմղենի բացատրությունը, ինչպես մենք արդեն այս մասին նշեցինք առաջ, վոչինչ չի տալիս պարզելու համար յերկու առաջնորդների զիրքը, նրանց իսկական տարածայնությունները, թեև վորոշ չափով հենվում է Պլուտարքոսի տեղեկությունների վրա: Ամենից առաջ սխալ է, թե Սպարտակի զորքերի մեջ կային միայն հելլեններ: Նույն Պլուտարքոսի տեղեկություններով վորոշապես հաստատված է, վոր Սպարտակի զորքերի մեջ կային վոչ միայն հելլեններ, այլև գալլեր, ընդվորում վերջիններս, ըստ յերևույթին, ավելի պակաս չէլին, քան հելլենները: Սա հետևում է այն բանից, վոր Սպարտակը, շարժվելով գեպի Ալպերը և անցնելով նրանցից, յենթադրում էր, ինչպես հայտարարում է Պլուտարքոսը, ստրուկներին բանակի մի մասը (թրակիացիներին)

<sup>1)</sup> Plut., Crass., 11. Sallust, 3 fr. 98.

<sup>2)</sup> Թ. Մոմղեն. Հոռմի պատմությունը, 3-րդ, հ., էջ 89 և հետևյալները:



վերադարձնել թրակիա, մյուս մասը (կելտերին և գալլերին)<sup>1</sup>՝ գաղղիա<sup>1</sup>): Այսպիսով, Սպարտակի մոտ գալլեր և գերմանացիներ լինելու մասին յենթադրում եր նույն Պլուտարքոսը, վարի վրա ամենից շատ հենվում են ստրուկների մեջ աղգային յերկպառակություն լինելու կողմնակիցները: Իսկ մյուս կողմից, յեթե յերակետ ունենանք միայն Մոմզենի տեսակետը, անհասկանալի յե, թե ինչու գալլա-գերմանական ցեղերը կրիկսի գըլլա-վերսեթյամբ մնացին հարավում և չգնացին Սպարտակի հետևից, մինչդեռ նրանք ավելի շատ ձգտում պետք և ունենային հենց զեպի հյուսիս, վարտեղ ուղևորվեց Սպարտակը, և վերջ նրանց հայրենիքն եր: Գալլա-գերմանացիք չգնացին Գաղղիա, մինչդեռ պարզվում ե, վոր հելլենները դիմել են հենց զեպի աջգտեղ: Մոմզենը վոչ միայն չի բացատրում մեղ ստրուկների իսկական տարածաչափությունները, այլև մեր առջև դարձյալ մեծ հարց ե գնում ստրուկների շարքերում աղգային յերկպառակություն լինելու մասին:

Մինչդեռ, ավելի շուտ, ապստամբության առաջնորդների միջև վեճեր տեղի ունեյին ստրուկների հետագա շարժման պլանի հարցի շուրջը, վոր կապված եր յերկու առաջնորդների սկզբբունքային գրույթների հետ: Սալլուստիոսը, Ապպիանոսը և Պլուտարքոսը նշում են, վոր Սպարտակը միանգամայն գիտակցաբար խուսափում եր Հոմմի վրա արշավելուց<sup>2</sup>): Սկզբում սա բացատրվում եր նրանով, վոր Սպարտակը նշել եր ստրուկների արշավանքի գլխավոր պլանը զեպի հյուսիս, նպատակ ունենալով ստրուկներին վերադարձնել իրենց հայրենիքը՝ թրակիա և Գաղղիա:

Այս պլանի մասին վոչ միայն հաղորդում ե Պլուտարքոսը, այլև ստրուկների Իտալիայից դուրս գալու այսպիսի պլան նկատելի յե Սպարտակի զեպի հարավ կատարած հետագա արշավանքներում: Արդյոք Ալպերից անցնելու գծավորությունները, ռազմադիտակմն, թե՛ այլ մոտիվներ ստիպեցին Սպարտակին, ի փոփոխումն ստրուկներին Ալպերի վրայով դուրս բերելու սկզբնական պլանի, այժմ շարժվել զեպի հարավ—աղբյուրներն

այս մասին մեղ վոչ մի տեղեկություն չեն տալիս: Իժբախտաբար, մենք առհասարակ տեղեկություններ չունենք արշավանքների մարշրուտը փոխելու պատճառների մասին: Բայց բնորոշ ե, վոր զեպի զեպի հարավ, Սպարտակը դարձյալ մտադրվում ե ստրուկներին հանել Իտալիայի սահմաններից: Սրա հաստատումն ե հանդիսանում Սիցիլիա փոխադրվելու նրա պլանը, վորի մասին խոսում են համարյա բոլոր աղբյուրները<sup>1</sup>): Սա յերևում ե Սպարտակի՝ մեղ հետաքրքրող վերջին արշավանքից զեպի Բրունզիզի: Այսպիսով, ստրուկների սպարտակյան շարժման ծրագրային մոմենտն եր հենց նրանց Իտալիայի սահմաններից հանելու, իրենց հայրենի յերկրները տանելու պլանը: Այս մոմենտը չի կարելի պատահական համարել, վորովհետև այն կրկնվում ե իբրև Սպարտակի՝ նշված բոլոր յերեք արշավանքների պլան:

Միանգամայն ուրիշ բնույթ եր կրում ստրուկների շարժումը, որինակ, կրիկսի զեկավարությամբ: Վերջինս չեր գնում ստրուկներին դուրս բերելու պլանը: Համենայն զեպս, աղբյուրները չեն խոսում այսպիսի պլանի մասին: Այս պատճառով կրիկսի գորախումբը չեր պաշտպանում Սպարտակին նրա զեպի հյուսիս շարժվելու մեջ: Կրիկսն իր գորախմբով շարունակում եր գործել հարավում<sup>2</sup>): Յեկ նույնիսկ այն ժամանակ, յերբ այս գորախմբի մնացորդները միացան Սպարտակին, վերջինիս հյուսիսից հարավ

<sup>1</sup>) Բոլոր աղբյուրները միաձայն խոսում են հյուսիսից հարավ արշավելու մասին՝ Սիցիլիա անցնելու համար, վորտեղ ստրուկներն աջակցություն կարող եյին ստանալ, և վորտեղ հեշտ կլինեք նավեր ճարել հայրենիք փոխադրվելու համար: Առավել ևս անհասկանալի յե այս հարցի առթիվ Ս. Ի. Կովալյովի դիտողությունն ստրուկական ապստամբությունների վերաբերյալ նրա ակնարկային հոդվածում (տես «Անտիկ հասարակության պատմությունից», «История ГАИМК, 101 պրակ, էջ 167): Ս. Ի. Կովալյովը գրում ե. «հազիվ թե իրավացի լինի Ս. Վ. Միշուլինը... վոր Սպարտակը վորոշել ե Իտալիայից դուրս պրճնել ծովային ճանապարհով՝ Սիցիլիայով: Ինչի՞ համար ե այս գարտուղի ճանապարհը»: Այս դիտողությունից կարելի յե յենթադրել, վոր հեղինակն ուզում ե հերքել այս «գարտուղի ճանապարհը»: Սակայն հաջորդելում Ս. Ի. Կովալյովը բառացի հայտարարում ե հետևյալը «Սպարտակի հետագա պլանը, ըստ յերևույթին, այն եր, վոր անցնի Սիցիլիա», և ապա գալիս ե Պլուտարքոսի ցիտատը: Այսինքն Ս. Ի. Կովալյովը հենց մեր բարեքը մեղ ե մատուցում:

<sup>2</sup>) App., I, 116—117. Sallust., III fr. 96, 98. Plut., Crass., 9

<sup>1</sup>) Plut., Crass., 9.

<sup>2</sup>) App., I, 117, 25, Sallust., 3, fr. 96. Plut.; Crass., 11

գնալու ճանապարհին, այս մնացորդները չեյին ուզում մինչև վերջ աջակցել Սպարտակին Իտալիայի սահմաններից ստրուկներին դուրս բերելու մեջ: Պլուտարքոսից հայտնի չե, վոր վճռական ընդհանրին այս զորախմբերը, վորոնք տրամադրված էյին Բրունդիզի արշավելու սպարտակյան պլանի դեմ, կրկին անջատվեցին Սպարտակից Գաննիկի և Կաստի ղեկավարութեամբ<sup>1)</sup>:

Ինչով կարելի չի բացատրել սկզբում Կրիկսի, իսկ հետո նաև Գաննիկի ու Կաստի զորախմբերի այսպիսի տրամադրութեանն ու նման հեռացումն Սպարտակի զորքերից:

Մենք կարծում ենք, վոր, մի կողմից՝ Սպարտակի և, մյուս կողմից՝ Կրիկսի, Գաննիկի ու Կաստի տարաձայնութեանների մեջ վճռական դեր էր խաղում նրանց զորքերի սոցիալական կազմի տարբերութեանը: Սպարտակն ինքը, ըստ յերևույթին, միավորում էր ստրուկների հիմնական մասան: Նրանց մեջ միանգամայն բնական էր Իտալիայի սահմաններից դուրս գալու և հայրենիք գնալու ձգտումը: Սա Սպարտակի ծրագրի հիմնական կետն էր նրա բոլոր յերեք արշավանքների համար: Իսկ Կրիկսի, Գաննիկի և Կաստի զորախմբերի կազմը միանգամայն այլ էր, նրա զորախմբերն ուզում էյին մնալ Իտալիայի հարավում և զբաղվել միայն հրասպարդիացիաներով: Հազիվ թե Կրիկսի, Գաննիկի և Կաստի զորախմբերի հիմնական կազմն ստրուկներից լիներ: Ավելի հավանական է պատկերացնել, վոր նրանց կազմի մեջ էյին մտնում վոչ թե ստրուկներ, այլ Սպարտակին միացած այն «գաշտերից ազատ գյուղացիները», ուղեկիցներն ու փախտակները, վորոնց մասին մեզ ասում է Ապոլիանոսը: Հատկապես նրանք կարող էյին շահագրգռված չլինել Սպարտակի հետևից գնալու: Սա Իտալիայի հարավի գյուղացիական մասան էր, վոր, ինչպես մենք արդեն նշեցինք, պրոլետարականանալով, ստրուկների հետևից զնում էր ապստամբութեան: Միայն հարձակումների ու պարբերական ասպատակութեանների միջոցով էյին նրանք մտածում վերադարձնելու իրենցից հափշտակված հողային սեփականութեանը: Սա, իհարկե, զորքերի մի փոքրիկ մասն էր: Որիդրոսի անդեկութեաններով<sup>2)</sup>, Կրիկսն

<sup>1)</sup> Plut., Crass., 11.

<sup>2)</sup> Oros., Hist. adv. pag., V, 24.

ուներ վոչ պակաս, քան 10 հազար իր կազմով այսպիսի խայտաբղետ զորք, վորն իրեն իսկ՝ Կրիկսին զորում էր պայքարի մի այլ ուղի Սպարտակի համեմատութեամբ: Ըստ Պլուտարքոսի, Գաննիկն ու Կաստն ունեյին մոտ 12 հազար մարդ<sup>1)</sup>:

Անտարակույս, հենց այս հանգամանքն է, վոր տարաձայնութեաններ և ստեղծել և չէր կարող չստեղծել նախ Սպարտակի և Կրիկսի, իսկ հետո Սպարտակի և Գաննիկի ու Կաստի միջև: Այս է այն տարաձայնութեանների սոցիալական հիմքն ապստամբների շարքում, վորոնք հանդեցրին Սպարտակի զորախմբերի մի մասի նույնիսկ հեռանալուն նրանից այնպիսի գեթեղ զորավարներով հանդերձ, ինչպես են Կրիկսը, Կաստը և Գաննիկը<sup>2)</sup>:

Սպարտակի և Կաստի ու Գաննիկի միջև ավելի ու ավելի աճող տարաձայնութեանների հետևանքով Բրունդիզիի արշավանքը բարդացավ իր առաջին իսկ շրջանում: Սպարտակից անջատված զորքի մի մասը բանակ դրեց Լուկանի լճի մոտերքում<sup>3)</sup>:

<sup>1)</sup> Plut., Crass., 11.

<sup>2)</sup> Այս գրութեան ավելի մանրամասն փաստարկում տրվում է մեր աշխատութեան մեջ «Սպարտակի ապստամբութեանը հին Հռոմում», էջ 152—160: Ի դեպ, այս հարցի տոթիվ էլ չի կարելի չնշել Ս. Ի. Կովալյովի ինձ համար անհասկանալի դիտողութեանը: Նա վիճարկում է աղբյուրների հիման վրա արտահայտած իմ այն գրութեան վոր ստրուկների հետ միասին Սպարտակի զորքերի մեջ գանձվում էյին նաև ազատ չքավոր գյուղացիներ, հռոմեյական բանակի փախտակներ: Չե վոր հողուտ այս բանի խոսում են համարյա բոլոր աղբյուրները և, առանձնապես App., 1, 117, 20—25, Plut., Crass., 10: Այս քերտ համար անհրաժեշտ է առաջին հերթին հերքել աղբյուրները:

Ս. Ի. Կովալյովը ցավում է, վոր աղբյուրները վոչինչ չեն թողել «ազատ բնակչութեան համար» տարրերի... մասնակցութեան վերաբերյալ (հիշ. աշխ., էջ 179) Սպարտակի զորքերի մեջ: Տարրերիակ բան է «ամուր» տարրեր վորոնել Սպարտակի մոտ և միևնույն ժամանակ բացասել «գաշտերից ազատ» պրոլետարականացած չքավորների մասնակցութեանը, վորոնց մասին մեզ ասում է Ապոլիանոսը (1, 116, 5):

Ս. Ի. Կովալյովը վիճարկում է սուղկուրսոմայ բառի մեր թարգմանութեանը, վոր մենք տալիս ենք ուղղակի իբրի «ուղեկից») սուղկուրդես բառից, վոր նշանակում է բերում-մտեցնում եմ, լվանում—բերում եմ): Հետևելով Վեյսմանի բուսաբանի այս բառի թարգմանութեանը, Ս. Ի. Կովալյովը սոսկ տալիս է «խուժան»: Բայց ինչ է այս «խուժանը»: Մրանք ինչ են—ստրուկներ, թե ազատներ: Հետևելով անբնիկ այսպիսի անստույգ թարգմանութեան, Ս. Ի. Կովալյովը չի բացատրում նաև «խուժան» հասկացությունը սոցիալական բովանդակութեանը:

<sup>1)</sup> Plut., Crass., 11.

Մրանից ոգավեց Կրասոսը և սկսեց նեղել Կաստի ու Գաննիկի զորքին: Վերջիններս արդեն խուճապի եյին մատնված, յերբ վրաս հասավ Սպարտակը, զաղարեցրեց փախուստը և վերջ դրեց խուճապին<sup>1)</sup>: Իսկ Կրասոսը, տեսնելով ստրուկներ ընկնել շիտթուլով, շտապեց պատերազմն ավարտել, առանց սպասելու Լուկուլլոսի և Պոմպեոսի գալուն: Նրան շտապում եյին Սպարտակին հաղթողի զափնիները: Նա չեր ուզում այդ զափնիները զիջել վոչ Պոմպեոսին, վոչ և Լուկուլլոսին: Վորովհետև Սպարտակը վստահորեն գնում եր դեպի Բրունդիզի և անջատված զորամասերը նրան չեյին պաշտպանում, Կրասոսը վորոշեց առաջին հերթին հաշիվ տեսնել Կաստի և Գաննիկի զորքերի հետ: Նա խաբեց վերջիններս զգոնությունը, զաղանի մտեցյալ նրանց բանակին ու, թեև յերկու կին տեսել եյին Կրասոսի զորախմբերը, Կրասոսը, ոգովելով իր ուժերի գերազանցությունից՝ կատարյալ պարտության մատնեց Կաստի և Գաննիկի զորքերին: Սա մեծ փրաս հանդիսացավ ստրուկների զորքի համար: Կանոնավոր շարքերում կռվելով, ընկան 12300 ստրուկ: Միայն յերկուսն եյին մեջքից վերավորված, — ասում ե Պլուտարքոսը: Մնացածները մինչև վերջին մարդն ընկան կռվի մեջ: Թեև Չարզված եյին Սպարտակից անջատված զորախմբերը, սակայն Սպարտակը նրանց պարտությունը պետք ե ընդունել իբրև հարված ստրուկներին ուժերին: Պլուտարքոսի վկայությամբ<sup>2)</sup> Սպարտակն ստեղծված պայմաններում ժամանակավորապես նահանջում ե Պետելի լեռները, վորպեսզի ուժեր հավաքած՝ վճռականորեն շարժվի դեպի Բրունդիզի: Հռոմի գլխավոր հրամանատարի ոգնականներն այս բանն ընդունեցին իբրև Սպարտակի թուլություն: Կլիստը, վոր Կրասոսի զեապաններից մեկն եր, և Սկրոֆոս քվեստորը նույնիսկ ջանում եյին Սպարտակին հետապնդել կրնակալիս: Սպարտակը կարողացավ վերահղագավել և հավաքել իր ուժերը: Նա հետ դարձավ և շարժվեց հռոմեյական զորքերի վրա: Ստրուկների զորքերի գրոհի հեռանքով հռոմեյացիք դիմեցին խուճապային փախուստի: Բվիտտո Սկրոֆան վերավորվեց և նրան նույնիսկ հաղիվ կարողացան տանել<sup>3)</sup>: Սպարտակն

1) Plut., Crass., 11.  
2) Նույն տեղում:  
3) Նույն տեղում:

այժմ կարող եր աղատորեն շարժվել Լուկանիայի վրայով դեպի բրունդիզի, իսկ հետո՝ Սպուլիա: Սակայն արշավանքի համար շատ նպաստավոր այս մոմենտին ել տարածայնություններ սկսվեցին, վորոնք ճակատադրական հանդիսացան սպարտակյան արշավանքի հետագա բախտի համար: Պլուտարքոսն այս դրամատիկական մոմենտի մասին հաղորդում ե հետևյալը. «Այս հաջողությունը կործանեց Սպարտակին, վորովհետև փախստակառ ստրուկները չափազանց գոռոզացել եյին: Նրանք լսել անգամ չեյին ուզում նահանջելու մասին և չեյին յինթարկվում պետեղին և արդեն ճանապարհին, դեռ ձեռքներին, նրանց ստիպեցին և արդեն ճանապարհին, դեռ ձեռքներին, նրանց ստիպեցին հետ գնալ Լուկանիայի վրայով դեպի Հռոմ<sup>1)</sup>»: Այս տեղը մեզ ասում ե, թե ինչ եր կատարվում ստրուկների մոտ և ինչմեզ ասում ե, թե ինչ եր կատարվում ստրուկների մոտ և ինչպես եր այս բանն ընկալում Պլուտարքոսը: Վերջինիս խոսքերից հետևում ե, վոր տարածայնությունների գլխավոր կետը ֆուում եր արշավանքի ուղղության հարցը: Պլուտարքոսի կարծիքով Սպարտակը և պետերն իբր թե ուզում եյին նահանջել, իսկ ստրուկները դեռ ձեռքներին պահանջում եյին արշավել Հռոմի վրա: Ինչին կարելի յե այստեղ հավատալ և ինչին հավատալ չի կարելի: Իհարկե, տարրիսակ բան ե յինթարկել, վոր Սպարտակը հռոմեյացիների դեմ փայլուն հաղթանակ տանելուց հետո ուղեհար նահանջել: Խոսք չկա, վոր Պլուտարքոսը հնարել ե այս ուղեհար նահանջել: Խոսք չկա, վոր Պլուտարքոսը հնարել ե այս մոմենտը՝ սպարտակյան զորքերի հետագա պարտությունը բացատրելու համար, անտարակույս Պլուտարքոսն այս մոմենտը մտցրել ե Սպարտակի համար վերջին և վճռական անցքերը դրամատիկ զարձակելու համար: Մյուս հեղինակների մոտ այս դրամատիկ զարձակում ե: Պլուտարքոսը միանգամայն ճիշտ ե հասցիատը բացակայում ե: Պլուտարքոսը միանգամայն ճիշտ ե հասցիացել ստրուկների պահանջը՝ գնալու դեպի Լուկանիա, Հռոմի ուղղությամբ: Անջատված զորքերն առաջ ել եյին պահանջում անմիջականորեն արշավել Հռոմի վրա, վորպիսի հանգամանքը, ինչպես մենք տեսանք, տարածայնություն առաջացրեց Սպարտակի հետ: Սպարտակը շարժվեց դեպի Լուկանիա, բայց, ըստ յերևույթին, միայն նրա համար, վորպեսզի հետո Սպուլիայի վրայով դիմի դեպի Բրունդիզի: Սա, իհարկե, և վոչ մի չափով չեր լուծում ստրուկների տարածայնությունը: Կարելի յե յին-

1406

1) Plut., Crass., 11.

Սպարտակի վերջին արշավանքը—2



Թագրել, վոր հենց հաշվի առնելով դասավորված պայմանները, իմանալով, վոր Պոմպեոսն Իսպանիայից ոգնութեան ե գալիս Կրասոսին, Սպարտակը փորձեց ժամանակ շահել, առաջարկելով Կրասոսին խաղաղութեան բանակցութեաններ ձեռնմանելու: Իսկ յերբ Կրասոսը մերժեց խաղաղութեան բանակցութեանները, Սպարտակի համար մի յեւք եր մնում. վոչ մի բույե չկորցնելով՝ շեշտակիորեն շարժվել դեպի Բրունդիզի, վորը և նա արավ: «Սպարտակը վճռեց ուխտի դիմել և, վորովհետև նա արդեն բաժանանաչափ հեծյալներ ուներ, նետվեց խրամատների վրայով և փախավ Բրունդիզիի ուղղութեամբ<sup>1)</sup>»: Յեթե առաջ ստրուկները ուսնորդը չէր շտապում, խնամքով կըստատում եր իր զրութեանը, նույնիսկ բանակցութեաններ ձեռնմանով Կրասոսի հետ, վորպեսզի ժամանակ շահի և ամբացնի իր զորախմբերը, ապա այժմ, անհանգստացած իր զորքերի պառակտումից ու անբավարար լինելուց, նա «ուխտի դիմեց», ինչպես մեզ ստում ե Ապպիանոսը: Չի կարելի, իհարկե, ասել, թե սա չմտածված ուխտ եր. նույն Ապպիանոսն ասում ե, վոր Սպարտակը բավականաչափ հեծյալներ ուներ և ստրուկների դեռ այն ժամանակ մեծ քանակ<sup>2)</sup>: Յեվ յեթե շուտ վրա հասավ արագիկ վախճանը, ապա այն բացատրվում ե միանգամայն նոր հանգամանքով:

Բանն այն, վոր թեև Կրասոսը կրնկակոխ հետապնդում եր ստրուկներին, վերջիններս, այնուամենայնիվ, բավական շուտ հասան Ապուլի, վոր գտնվում եր Բրունդիզիի ճանապարհին: Բայց, ըստ յերևույթին Բրունդիզիից վոչ հեռու Սպարտակն իմանում ե, վոր արդեն Բրունդիզի յե հասել Լուկուլլոսը՝ վերադարձած Միհրդատին հաղթելուց հետո<sup>3)</sup>: Այս պայմանները նոր զրութեան ստեղծեցին խաղաղության ստրուկներին առաջնորդի համար: Կրասոսի և Լուկուլլոսի ուժերի միացումը թույլ չտալու համար Սպարտակը վորոշում ե ճակատամարտ տալ Կրասոսին, «Վիթխարի ճակատամարտ տեղի ունեցավ՝ չափազանց կատաղի այն հուսահատութեան հետևանքով, վոր պատել եր այսպիսի քանակութեամբ մարդկանց<sup>4)</sup>: Այն արդեն վերջին ճակատամարտը դարձավ ըստ-

1) App 1, 120.

2) Նույն տեղում:

3) Նույն տեղում:

4) Նույն տեղում:

լուկների համար, վորոնց ուժերը ջարդված եյին արշավանքներից և յերկարատև կռվից: Սպարտակի զորքը չդիմացավ հոռոտայեցիների գրոհին: Ստրուկները կռվում եյին հերոսաբար, մինչև վոր բոլորն ել կոտորվեցին: Նրանք այնքան շատ եյին կոտորվել, վոր Ապպիանոսն ասում ե, թե նրանց հաշվին անկարելի յեր: Սպարտակը կռվում եր առաջին շարքերում, նա սպանեց հոռոտայական յերկու ցենտուրի (հարյուրապետ) և, ջարդված ազգրով, ծնկերի վրա, շարունակում եր կռվել առաջին շարքերում, մինչև վոր այնպես սրախողխող արվեց, վոր հետո նրա դիակը չկարողացան գտնել:

### Յ. ՍՄԱՐՏԱԿԻ ՄԱՇՎԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Սպարտակի ղեկավարութեամբ մղված վերջին մարտի տրագիկ վախճանը խորացավ ստրուկների առաջնորդի, զորավարի և պայքարի մեջ նրանց ներշնչողի կորստով՝ հանձին ընկած Սպարտակի: Սա, իհարկե, դեռևս ստրուկների կատարյալ և վերջնական պարտութեանը չէր, վորոնք վոտքի՝ եյին կանգնել կեղեքիչների դեմ: Իտալիայի հարավում ցրված սպարտակյան ջուկատների մնացորդները շարունակում եյին դիմանալ և, ինչպես մենք կտեսնենք ստորև, հոռոտայական զորավարներին մեծ ջանք նստեց սպարտակյանների վերջին պոթկուսների ճնշումը:

Պատմական զրականութեան մեջ հուշակավոր առաջնորդի մահվան հանգամանքների հարցը դեռևս մնում ե միանգամայն չպարզված: Սպարտակի մահվան մասին մենք ունենք ամենահակասական վերսիսներ:

Նախ դիմենք այն հարցին, թե վորտեղ ընկավ Սպարտակը, վորն և նրա վերջին կռվի վայրը: Այս առթիվ մենք ունենք յերկու ազբյուրների՝ Որոգիոսի և Յեվտրոպեոսի տարբեր ցույցմունքները: Առաջինը վկայում ե, թե Սպարտակը բանակ եր խըփել Սիրարա գետի ակունքների մոտ (ad caput silari fluminis)<sup>1)</sup>. հենց այստեղ ել նրա վրա հարձակվեց Կրասոսը: Յեթե ընդունելու լինենք այս վերսիսն, ապա տրագիկ անցքը տեղի յե ունեցել Լուկանիայի մարզում: Իսկ մյուս հեղինակը մեզ հաղորդում ե, վոր Սպարտակի զորքերը պարտված եյին Ապուլիայի մար-

1) Oros, 5, 23.

դում (victique sunt iu Apulia...)¹), այսինքն, իսկապես, Բրունզի գիզի մոտերքը, վորտեղ ուղևորվել եր Սպարտակը: Այս վերջին վկայությունները հակասությունները հաստատում են, վոր նրանց հեղինակներն, ըստ յերևույթին, ոգտվել են զանազան աղբյուրներին, վորոնք այժմ դժվար ե կամ համարյա անկարելի յե վերականգներ:

Ինչպէս ե լուծվում աղբյուրների վկայության այս հակասությունն Սպարտակի մահվան տեղի մասին: Մեզ թվում ե, վոր այս հարցը կարելի յե լուծել միայն հաշվի առնելով ուրիշ, ավելի հուսալի աղբյուրներ: Որինակ՝ Պլուտարքոսից մեզ հայտնի յե, վոր Սպարտակն, իրոք, ուղևորվել ե դեպի Լուկանիա: Դեպի Լուկանիա յե նա գնացել վոչ միայն այն պատճառով, վոր ըստ ըուկները պահանջում եյին գնալ դեպի Հուս²), այլև այն պատճառով, վոր սպարտակի՝ Բրունզիզի գնալու պլանն իրականացնելու դեպքում ճանապարհը Բրուտտիից ընկած եր միայն Լուկանիայի վրայով: Բայց միանգամայն սխալ ե այստեղից մեկեն յեզրակացնել, թե հենց այս վայրում ել տեղի ունեցավ ճակատամարտը, վորտեղ ընկավ առաջնորդը: Որոգիտքը, նշելով «Սիլարի աղուներն», այսինքն Լուկանիայի մարզը, շփոթում ե Սպարտակի հիմնական գորքերը Գաննիկի և Կաստի անջատված գործակալների հետ: Հիրավի³) վերջիններս կանգնած եյին Լուկանիայի լճի մոտերքը և հետո, Կրասոսից նեղվելով⁴), յերևի տեղավորվեցին Սիլարի աղուները մոտ: Այս գորքերն այստեղ ջախջախվեցին: Բայց չե՞ վոր բոլոր աղբյուրներն ել նշում են⁵), վոր Լուկանիայում Գաննիկի ու Կաստի այս պարտությունը նախորդեց այն ճակատամարտին, վորտեղ ընկավ Սպարտակը: Նույն Որոգիտոն ասում ե, վոր հետո միայն Կրասոսին հաջողից հաղթել նաև Սպարտակին⁶): Հետևաբար, յերբ Լուկանիայում պարտություն կրեցին Գաննիկի ու Կաստի գորքերը, Սպարտակը և նրա գորքն այնտեղ չեյին: Հավանաբար Սպարտակը բավակա-

¹) Eutrop, 6, 6 (վերջը):

²) Plut. Crass., 11

³) Plut., Crass 11 (սկիզբը):

⁴) Նույն տեղում:

⁵) Նույն տեղում. T. Liv., epit., XCVII; Oros; V, 23.

⁶) Նույն տեղում:

նաչափ հեռու յեր, այլապես նա կմասնակցեր Կրասոսի դեմ մղված ճակատամարտին և թույլ չեր տա, վոր սարուկները պարտվին:

Իսկ ուր ուղևորվեց Սպարտակը, վորտեղ եր գտնվում նա այդ ժամանակ: Սպարտակն ու նշում եր, վոր, տեսնելով սարուկների համար ստեղծված վտանգավոր դրությունը, ապստամբության առաջնորդը վորոշեց արագացնել առաջխաղացումը դեպի Բրունզիզի¹): Դրության վտանգավորությունը նախ այն եր, վոր ըստ պատմական նշանակություն ունեցող գորքի մի մասի հեռացումը Գաննիկի ու Կաստի դեկավարությամբ, յերկրորդ՝ Սպարտակի համար հայտնի դարձավ Պոմպեոսի մտադրությունն ոգնության գալու Կրասոսին կամ, համենայն դեպս, Կրասոսի նամակը հոմեյական սենատին, խնդրելով ոգնության ուղարկել Պոմպեոսին: Վերջապես, սարուկներին առաջնորդը համոզվում ե, վոր չի հաջողվում ժամանակը ձգձգել Կրասոսի հետ խաղաղության բանակցությունների մեջ մտնելու միջոցով նոր ուժեր հավաքելու համար: Այստեղ արդեն ընրտություն չկար, և, Սպարտակին արտահայտությամբ²), Սպարտակն «ամբողջ գորքով նետվեց խրամատների վրայով և փախավ Բրունզիզի ուղղությամբ»: Իսկ վորտեղ եր կատարվում այս: Այն հանգամանքը, վոր միանգամայն ճշգրիտ նշվում ե այն ուղղությունը, ուր շեշտակիորեն գիմեցին սարուկները, նշանակում ե, վոր, անտարակույս, իրագործությունները կատարվում են Բրունզիզի մոտերքում: Իսկ Վորտեղից կարող եյին այն ժամանակ իմանալ, թե ուր ե ուղևորվում Սպարտակը: Վոր այս իրագործությունները տեղի յեն ունենում հենց Բրունզիզից վոչ հեռու, հոգուտ սրա յե խոսում ե այն, վոր Սպարտակի համար արդեն հայտնի յե դառնում Լուկուլոսի գալուստը Բրունզիզի³): Հաղիվ թե այս բանն այնքան արագորեն հայտնի դառնար, յեթե Սպարտակը գտնվեր Բրունզիզից հեռու ինչ-վոր տեղ, որինակ՝ Լուկանիայում: Հենց այն հանգամանքը, վոր Սպարտակը գտնվում եր Բրունզիզիում և այնտեղ հարձակման սպառնալիքի տակ եր, մի կողմից՝ տեղ հասած Լուկուլոսի և, մյուս կողմից՝ Սպարտակին կրնակալիս հետապն-

¹) App., 1, 20.

²) Նույն տեղում:

³) Նույն տեղում:

դող Կրասոսի զորքերից, ստիպեց Սպարտակին կռիվն ընդունելու ավելի շուտ, քան նա կարողացավ պատրաստվել զրան: Թշնամու յերկու բանակների միանալուց առաջ Սպարտակը կռվի մեջ մտավ: Այսպիսով, ինչպես մեզ հաջողվեց ցույց տալ, կռիվը պետք է տեղի ունեցած լիներ Բրունդիզիի մոտ: Ուստի իրավացի չե վոչ թե Որոզիոսը, այլ Ֆելարոպիոսը, վոր միանգամայն ճիշտ վկայում է, թե ստրուկների համար որհասական ճակատամարտը տեղի ունեցավ Ապուլիում<sup>1)</sup>: Հենց այստեղ էլ ընկավ Սպարտակը:

Ի՞նչ հանգամանքներում սպանվեց Սպարտակը: Իժբախտաբար, ավյալ հարցումն էլ ազբյուրների մեջ հակասություններ կան:

Բոլոր ազբյուրները միաբանորեն վկայում են Սպարտակի հերոսական մահը: Այսպես, որինակ, Ապուլիանոսը խոսում է ըստրուկների առաջնորդի արտակարգ հերոսություն մասին իր կյանքի վերջին բուպեններին: Վիրավորված լինելով ազդրից՝ Սպարտակը ծունկի իջավ, վահանն առաջ բերեց և շարունակեց կռվել հարձակվողների դեմ, մինչև վոր ընկավ իրեն շրջապատողների հետ միասին<sup>2)</sup>: Նույն բանն է վկայում նաև Պլուտարքոսը: Նրա խոսքերով, ստրուկների կրակոտ առաջնորդը «նեավեց իր իսկ Կրասոսի վրա, բայց կռվողների և վիրավորների բազմություն պատճառով նրան հաջողվեց հասնել նրան: «Բահց սրա փոխարեն» — ասում է Պլուտարքոսը — Սպարտակն սպանեց նրա հետ կռվի մեջ մտած յերկու՝ ցենտուրիներին<sup>3)</sup>: Նույնիսկ Ֆլորը, վոր, ինչպես հայտնի չե, ստրուկների ապստամբությունը նկարագրել է անսքող կատաղությունը ու ներքին դառնությունը այն մըշտական անհաջողությունների խայտառակություն համար, վոր կրել էր Հռոմը գլադիատորների դեմ կռվելիս, ստիպված էր անթառամ փառքի տուրք տալ Սպարտակին նրա հերոսություն համար: Ֆլորի արտահայտումները մի տեսակ ամփոփում են ստրուկների առաջնորդ հերոսի մահվան վերաբերյալ անտիկ ժամանակներում հայտնի պատումները. «Արտելք կատարելով՝ ստրուկներն ընկան լավագույններին արժանի մահով, կըռ-

<sup>1)</sup> Eutrop. 6,5 (վերջը):

<sup>2)</sup> App., 1, 120 (վերջը)

<sup>3)</sup> Plut., Crass., 11 (վերջը)

վելով վոչ թե կենաց, այլ մահու համար, վորը միանգամայն բնական է այն զորքերի մեջ, վորոնց հրամանատարը գլադիատոր է: Սպարտակն ինքը, բացառիկ խիզախությունը կռվելով առաջին շարքում, սպանվեց ու ընկավ ինչպես վայել էր մեծ զորավարին (guasi imperator occisus est)<sup>1)</sup>: Հույն-հռոմեյական հեղինակների վրա բնավ չի կարելի կասկածել Սպարտակին համակրելու մեջ, հետևաբար, նրա հերոսությունն այնքան ակներև էր, վոր վոչ վոք չէր կարող նույնիսկ տարակուսանքի յենթարկել այն: Այս վերջին կռվի բնույթի վերաբերյալ մենք ունենք միաբան վկայություն: Բոլոր հեղինակներն էլ պնդում են հետևյալ յերկու հետաքրքրական փաստերը<sup>1)</sup> կռվի նախաձեռնություն Սպարտակի կողմն էր և 2) ստրուկները կռվում էին արտասովոր կատաղությամբ, վորը մասամբ արդեն յերևում է վերև բերված հատվածներից:

Այն պայմանները և ստրուկների այն զրույթյունը, յերբ նրանք, Բրունդիզիին մոտենալիս, իմացան Լուկուլլոսի այնտեղ ափ իջնելու մասին, այնքան պատասխանատու ելին, վոր չէր կարելի ժամանակ կորցնել: Այս պատճառով հենց Սպարտակը, չքսպասելով, թե յերբ իր վրա կարշավի Կրասոսը, ստիպված էր ինքն սկսելու հարձակումը, կռվի նախաձեռնություն ամբողջ ժամանակ պահելով իր ձեռքում:

Այս մանրամասների վրա մենք ստիպված էլինք ուշադրություն դարձնելու այն չափով, վորչափով վոր նրանք լույս են սփռում ստրուկների առաջնորդի բուն իսկ մահվան հանգամանքների վրա, Սպարտակի մահվան այն մոմենտների վրա, վորոնց մասին ազբյուրներում մենք միաբան վկայություններ չունենք: Մինչև 1927 թ., յերբ Պոմպեյի պեղումների հետևանքով գտնվեց վորմիանկարչական մի ֆրագմենտ, վորը պատկերում է Սպարտակի մահը, վերջինս մեր գրական յերկու ազբյուրներում դանազան կերպով էր ներկայացվում: Առաջին վերսխան պատկանում է Պլուտարքոսին: «Հեծյալ ստրուկներն առաջ վազելով դեպի հռոմեյական բանակը, կռիվ բացեցին... Սպարտակն ստիպված էր ամբողջ զորքը գոսավորելու մարտական կարգով: Նրան ձի մոտեցրին: Թուրը հանելով և ասելով, վոր հաղթելու գեպքում նա թշնամու գեղեցիկ շատ ձիեր կունենա, իսկ պարսվելու գեպքում նա նրանց կա-

<sup>1)</sup> Flor., H. R. 3, 7,

րէքը չի գգա, Սպարտակը խոցեց ձիուն: Այնուհետև նա նետովեց իր  
խակ՝ հրատուսի վրա, բայց կովորները ու վերավորները բազմութեան  
պատճառով նրան չհաջողվեց հասնել նրան: Բայց սրա փոխարեն նա  
սպանեց իր հետ կովի մեջ մտած յերկու ցենտուրիներին: Վեր-  
ջագետ Սպարտակի շքախումբը փախավ, իսկ նա, շրջապատված  
մեծ քանակութեամբ թշնամիներով և արիարար հետ մղելով նը-  
բանց հարվածները, վերջիվերջո սրախողխող յեղավ<sup>1)</sup>: Ի՞նչն է  
հանգես գալիս առաջին պլանի վրա այս վերսիայում: Չի ու պատ-  
մութեանը Պլուտարքոսը զբամատիկացնում է, վորպեսզի ընդ-  
գծի Սպարտակի բախտի դատապարտված ու անխափան լինելը:  
Սրանով իսկ Պլուտարքոսը մի տեսակ կանխարուծում է հետագա  
կովի յերթը և ընթերցողներին նախապատրաստում է Սպարտակի  
վերջին կովի և նրա բախտի միանգամայն վորոշակի ֆինալին:  
Խոսք չկա, վոր գրական դարգարանքները մեզնեց թագցնում են  
ճակատամարտի ուսու պատկերը և մեծ դորովարի վերջին բո-  
պենները: Ամենից առաջ չափազանց տարբերակ է թվում, վոր  
այն ժամանակ, յերբ ստրուկները շարվում են մարտական  
կարգով, կովի մեջ են մտնում «կանոնավոր շարքով»<sup>2)</sup> և այն  
ել բավականաչափ հեծելազոր ունենալով հանդերձ<sup>3)</sup>, բանից  
դուրս է գալիս, վոր Սպարտակը խոցում է իր ձիուն և իր  
բանակի գլուխն անցած՝ գնում վորքով: Իրադարձութեաններն  
այսպես պատկերելու ճշտութեան վրա կարելի չէ կասկածել բո-  
լոր տեսակետներից: Սակայն, այս բոլոր զարգարանքների հետև,  
թերևս, կարելի չէ յենթադրել ինչ-վոր ձիու պատմութեան, վորն  
այնուհետև այնպես անհավանական ձևով հագորդում է Պլուտար-  
քոսը:

Հերոսի կյանքի վերջին բոպենների վերաբերյալ մյուս վեր-  
սիան նկարագրում է Ապպիանոսը: «Սպարտակը վճուեց ռիսկի  
գիմեք և վորովհետև նա արդեն բավականաչափ ձիավորներ ու-  
ներ, նա ամբողջ գորքով նետովեց խրամատների վրայով և փա-  
խավ Բրուսզիգի ուղղութեամբ... Բայց յերբ Սպարտակն իմա-  
ցավ, վոր Բրուսզիգիումն է նաև Լուկուլլոսը... նա շարժվեց  
հրատուսի վրա՝ այն ժամանակ իր մեծ բանակով: Տեղի ունեցավ

1) Plut., Crass., 11.

2) Flor., H, R., 3, 7.

3) App., 1, 120.

չափազանց կատաղի և վերթարի ճակատամարտ... Սպարտակն  
աղբից վերավորված եր նիզակով՝ ծունկի իջնելով և վահանն  
առաջ բերելով, նա հետ եր մղում հարձակվողների հարվածները,  
մինչև վոր ընկավ իրեն շրջապատող մեծ քանակութեամբ մարդ-  
կանց հետ... Սպարտակի գիտաբ չգտնվեց»<sup>1)</sup>:

Այս վերսիան, անտարակույս, տարբերվում է Պլուտարքոսի  
վերսիայից: Այստեղ նշվում է, վոր Սպարտակը դեռ այն ժամա-  
նակ բավականաչափ բանակ ուներ, նա ուներ նաև բավականա-  
չափ հեծելազոր և, միանգամայն ակներև է, վոր այս վերսիայով  
Սպարտակը պատկերացվում է ձիու վրա, վորովհետև այլ կերպ  
չի կարելի յենթադրել, վոր մեծ բանակի ու հեծելազորի գլուխ  
անցած, նա զնար վորքով: Յեթև սա այսպես լինել, ապա  
Ապիանոսն անտարակույս պետք է այս բանը մի անգամ բացա-  
տրել: Իսկ այն հանգամանքը, վոր ստրուկները առաջնորդը ձիու  
վրա յեր, մտածը հաստատվում է topatoiv տերմինով, վոր  
Ապպիանոսը գործ է ածում Սպարտակի հակառակորդի զինքը բնո-  
րոջելու համար: Բանն այն է, վոր Հուստատանում հետագա դա-  
րնշրջաններում, իսկ հետո նաև Հուստում topatiov գործ է յայն  
ածում գլխավորապես հեծյալները, վորովհետև իր յերկարութեամբ  
ու կշռով այսպիսի նիզակը ուղղական գործողութեանների մեջ  
ազնիկ հարմար եր հեծելազորի համար, քան հետակների, վո-  
րոնք (նույնիսկ ծանր զինվածները) կաշկանդված կլինեյին նի-  
զակով և կզստնային չափազանց անշարժունակ: Սպարտակի և  
նրան նիզակով խոցած թշնամու կովում, ակներև է, վոր նրանք  
յերկուսով ել ձիով եյին:

Միայն մեզ շփոթեցնում է Ապպիանոսի մի խոսքը, թե նի-  
զակով աղբից խոցված Սպարտակը ծունկի յի իջնում: Բանն  
այն է, վոր նա ծունկի կարող եր իջնել միայն ձիուց իջնելով և  
այն է, վոր նա ծունկի կարող եր իջնել միայն ձիուց իջնելով և  
բացակայում է: Այսպիսով, յեթև մենք Պլուտարքոսի վերսիային  
չենք կարող հավատար, իբրև քիչ հավանականի, ապա Ապպիանոսի  
ազնիկ բնական ու ուսու պատկերին մոտիկ վերսիան մնում է  
այնուամենայնիվ մութ:

Մենք հագիվ թե կարողանայինք լուծել այս հարցը, յեթև  
1927 թվից մեր ձեռքում չլինել հնագիտական մի հետաքրքրա-

1) App., I, 120

կան վավերագիր, վորն առայժմ միակն և վոչ միայն սպարտա-  
կյան ապստամբութեան պատմութեան համար, այլև հազվագույտ  
և սարուկները ապստամբութեանները համար առհասարակ: Սա  
Պոմպեյի վորմանակարչական մի ֆրագմետ և, վոր Մալուրիի պե-  
ղումների ժամանակ գտել և նեապոլի թանգարանի դիւրեկտորը:  
Այս վավերագիրն առաջին անգամ հրատարակվեց հնագի-  
տական պեղումների վերաբերյալ հաշվառութեան հետ միասին  
իտալական „Notizie degli scavi“, ժուռնալում 1927 թ.

Մոսկվայում այս ժուռնալը չգտնվելու պատճառով, այս վա-  
վերագրից մենք ոգտվում ենք Լեմանի հրատարակութեամբ (տես  
գերմանական «Forschungen und Fortschritte» ժուռնալի 1928 թ.  
նկ. 5)<sup>1)</sup>:

Ամենից առաջ այս գյուտը, ինչպես ձիշտ նկատել և դեռևս  
Լեմանը, մեզ համար հետաքրքրական և իր հնութեամբ, իր բովան-  
դակութեամբ և կոմպոզիցիայի յուրատեսակութեամբ: Այս տեսա-  
կետից մտանանք նաև մենք, ընդգծելով միայն, վոր մեզ համար  
այս վավերագիրը հետաքրքրական և նաև իբրև հին ժամանակների  
հնագիտական միակ հուշարձան Սպարտակի վերաբերյալ: Դժբախ-  
տաբար, այն մեզ հասել և վատ վիճակում:

Միագույն ուրվագծված վրձնահարվածներով կերպարան-  
ված և մարտական մի ընդհարման պատկերը: Այս պատկերը  
քաշված և Պոմպեյի մի տան սպիտակ յերեսապատին: Թե Մա-  
լուրին և թե Լեմանը յենթագրում են, թե մեր առջև կա մի տե-  
սարան: Այսպիսի մեկնարանութուն մենք չենք կարող ընդունել:  
Մեր կարծիքով սակայն յե յերկու տեսարան: Առաջին տեսարանը  
պատկերի աջ կողմին և, յերկրորդը՝ ձախ: Գործողութունը կա-  
տարվում և աջից ձախ, այդպես ել պետք և կարգալ նաև աջ  
մասի վրայի մակագրութունը, վորովհետև այն գրված և ոսկե-  
րեն<sup>1)</sup>, ինչպես հաստատել և Մալուրին<sup>2)</sup>: Կամպանիայում բնակ-

<sup>1)</sup> Ein historisches Gemälde in pompeji von Dr K. Lø-  
mann—Hartlebeu Forschungen und Fortschritte, Nachrichten-  
blatt der deutschen Wissenschaft und Technik, herausge. von  
karl kernof, № 3, 1928.

<sup>2)</sup> Ոսկերի մասին, իբրև կամպանիայի հին ժողովրդի, մեզ հաղորդում և  
Մարտեմը (5-րդ <sup>3)</sup>), Ոսկերը գրում է յին աջից ձախ: Նրանց լեզուն գեո բա-  
վականաչափ չի ստուժանախրված, վորովհետև այս լեզվով արձանագրութուն-  
ների շատ չկան: Առաջին արձանագրութունը գտնվում է 19-րդ դ. վերջում:

<sup>3)</sup> Տես նրա հոդվածը «Notizie degli scavi», 1927

վոր հին ոսկերը գրում է յին աջից ձախ, հավանաբար այսպես  
է յին նրանք տեղաբաշխում նաև առարկաները պերսպեկտիվում:  
Հնարավոր և, վոր ոսկերի կերպաբանումների մեջ առհասարակ  
բացակայում էր պերսպեկտիվը, ինչպես այս կարելի չի դիտել  
հին ժողովուրդներից շատերի մոտ:

Մեր յենթագրութեամբ, պատկերում կերպարանված գործո-  
ղութունը կատարվում և այսպես: Սկսենք աջ կողմից, այսինքն  
առաջին տեսարանից: Այս տեսարանի աջ թևում յերևում և վո-  
ղահարի վատ պահպանված կերպարանքը: Նա ազգանշան և տա-  
լիս: Փողահարի ներկայութունն այստեղ ընդգծում և կամ գոր-  
ծողութեան սկիզբը, այսինքն հեծյալների ճակատամարտը,  
կամ վտանգ կռվող կողմերից մեկի, ամենից հավանական և՛ վը-  
տանգավոր գրութեան մեջ ընկած աջակողմյան ձիավորի համար:  
Այս տեսարանի գլխավոր հետաքրքրականութունը, իհարկե, յեր-  
կու կռվող հեծելազորներն են: Մեկի (աջի) գլխավերևը մակա-  
գրված և «Սպարտակ», առաջինին հետապնդող յերկրորդ հեծյալի  
գլխավերևը թերի մակագրութուն և (ամբողջովին չի պահպան-  
ված) «pholi... ans»: Մալուրին<sup>1)</sup> համոզել է կերպով վերմանել և  
այն, իբրև յերկու խոսք՝ pheli (cs Pompaj) ans, այսինքն Ֆե-  
լիքս Պոմպեյից (կամ Պոմպեյացի): Ինչպես ցույց են տվել Մա-  
լուրին և Լեմանը, և սրանում վոչ մի տարակույս չկա, տեսարանը  
պատկերացնում և Սպարտակի ճակատամարտն ինչ վոր Ֆելիքս  
Պոմպեյացու հետ հնարավոր և, վոր հոռմեյական բանակի ցեն-  
տուրի հետ: Ամենից առաջ միանգամայն անհավանական բան  
և, վոր իրեն փառքով պատած սարուկների առաջնորդի անունը  
կարողանային տալ կամ վերագրել ինչ-վոր մի ուրիշի: Բացի  
սրանից, թրակիական Սպարտակ անունը շատուցի միակն եր  
իտալիայում, Աչքի յե գտնում և այն, վոր յեթև Սպարտակն ան-  
վանվում և միայն իր անունով, ապա առանձնապես ընդգծվում  
և, վոր նրա հակառակորդը ծնված և Պոմպեյում և Սերվում և  
պոմպեյական ցեղից: Սրանից կարելի չի անել հետևյալ յեղա-  
կացութունը: Մեր առջև մի կողմից կերպարանված և սարուկ-  
ների հոչակավոր առաջնորդ Սպարտակը և, մյուս կողմից՝ ինչ-վոր  
Ֆելիքս Պոմպեյացի, վորը կերպարանվում և իբրև Սպարտակին  
հաղթող: Արդեն այս առաջին տեսարանը մեզ ասում և ամբողջ

<sup>1)</sup> Նույն տեղում



պատկերի բնույթի մասին: Նա պետք է կերպարոսնի Սպարտակի մասը: Պատկերի մեջ հոռոմեյական ազատ քաղաքացուն թրակիական սարկի կողքին դնելը հաղիվ թե վորեւ ուրիշ իմաստ ունեցած լինի: Հենց տեսարանն էլ բավականաչափ պարզ է ցույց տալիս այս: Ֆելիքս Պոմպեյացին նիզակով հարված է հասցնում Սպարտակի ազգերին: Այս պատկերումը միանգամայն համերաշխ վում է Ապպիանոսի այն տեղի հետ, վորտեղ վերջինս խոսում է Սպարտակի ազգերից խոցվելու մասին: Ստրուկեների առաջնորդը, մի ձեռքով ձիուց բռնած, ըստ յերևույթին, շարունակում է կովել հակառակորդի հետ և համենայն դեպս իր վահանով, ինչպես այս յերևում է պատկերում, պաշտպանվել հարվածից:

Պատկերի ձախ կողմում նկարված յերկրորդ տեսարանը, մեր կարծիքով, վերարտադրում է կովի յերկրորդ վումը: Դժբախտաբար, պատկերի այս մասի վերևի մակագրութունը չի պահպանվել, և այն հնարավոր չէ վերականգնել: Վոչ Մայուրին, վոչ էլ Լեման-Հարտլեբենը պատշաճ ուշադրութուն չեն դարձրել պատկերի այս մասի վրա<sup>1)</sup>: Իսկ մեզ համար մեծ հետաքրքրութուն է ներկայացնում այն, քանի վոր վոչ-անկարևոր մանրամասնութուն պիտի մատուցի Սպարտակի մահվան հանգամանքները հաստատելու համար: Տեսարանի խորքում պանկերված է մի զինվոր: Սրա կերպարանքը վատ է պահպանված: Բայց յերկու մոմենտ չեն կարող տարակույս առաջացնել: Առաջինը՝ պատկերի խորքի զինվորը սողավարտ չունի, — ըստ յերևույթին, կովի մեջ գցել են և նա կորել է: Հետևաբար, այս զինվորը պատկանում է պարաված կողմին: Յերկրորդ զինվորի զիրքը պատկերում, մանավանդ նրա մարմնի ներքևի մասը, այնքան անբնական է, վոր ստիպում է յենթադրելու, վոր ազգրից կամ վոտրից վիրավորված զինվորը հարկազրված էր թշնամու հետ կովել ծանր դրության մեջ գտնվելով: Յեթե առ այս հաշվի առնենք նաև Ապպիանոսի խոսքերը<sup>2)</sup>, թե Սպարտակը վիրավորվելուց հետո ծունկի իջավ և այսպիսի զիրքով շարունակում էր կովել հոռոմեյական լեգեոններին դեմ, ապա այս յերկրորդ տեսարանում իրոք ներկայացված է Սպարտակն իր կյանքի վերջին րոպեներին: Նրա վրա հարձակվող հոռոմեյական սողավարտավոր լեգեոնների հզոր փե-

զուրան աչքի յե ընկնում այս տեսարանի առջևի պլանում: Համանաբար, լեգեոնները թրով հարվածում է Սպարտակին, վորը ծնկները վրա շարունակում է հարվածներ հասցնել իր թշնամիներին: Այս մասի այսպիսի մեկնաբանության ոգտին և խոսում նաև այն, վոր նկարիչն անհրաժեշտ է համարել այս մոմենտը մտցնել պատկերի մեջ: Յեթե սա մի անհարկավոր մանրամասնութուն լիներ, կամ հեծյալների ճակատամարտի ինչ-վոր ուղեկցութուն, ապա հաղիվ թե այս բանը պատկերի մեջ մտցվեր, այն էլ հատուկ մակագրությամբ, վոր դժբախտաբար չի պահպանված:

Այսպիսով, պատկերի ինչպես աջ, այնպես էլ ձախ մասի տեսարանները լավ են համերաշխվում Ապպիանոսի հետ: Ըստ յերևույթին Սպարտակի մահվան վերաբերյալ նրա վերսիան գերիշխող էր: Պատկերից մենք իմանում ենք մի նոր բան էլ — թե ով էր Սպարտակին սպանողը: Անպարտելի Սպարտակի սպանութունը հավերժացնելու տենչն անտարակույս պիտի պատկաներ իրեն իսկ սպանողին: Ուստի իրավացի յե Լեմանը, յերբ նա ասում է, թե այն տունն էլ, վորտեղ պեղումների ժամանակ գտնված է այս ֆրեսկան, հավանաբար պատկանում էր Սպարտակին սպանող Ֆելիքս Պոմպեյացուն: Հոգուտ այս բանի խոսում է նկարի հոռութունը: Բացի նրանից, վոր նա մակագրութուններ ունի հին ոսկերեն լեզվով, չէ վոր գտնված է հին ծեփի շերտում, վորը հետո ծածկված է յեղել ավելի հետագա շերտով, վորն արդեն վերաբերում էր կայսրության սկզբնավորությանը: Հետևաբար, այս նկարը կարող է վերաբերել անմիջականորեն Սպարտակյան ապստամբության վերջերին: Սպարտակին հաղթելուց և նրա նկատմամբ հաշվետես կատարելուց անմիջապես հետո Ֆելիքս Պոմպեյացին իրեն հավերժացնում է վորմնանկարչության մեջ իրեն հաղթող: Պոմպեյ քաղաքի համար սա արտասովոր ակտուալ նշանակութուն ուներ ինչպես այն պատճառով, վոր Սպարտակը մի ժամանակ նրանակ էր դրել այս քաղաքի մոտ, այնպես էլ այն պատճառով, վոր Սպարտակին հաղթողն այս քաղաքի քաղաքացի յեր: Պատկերի կոչումն էր փառարանել սպանողին, վորը զարձավ Սպարտակի դեմ մղված վերջին կովի «հերոսը»:

Մեզ մի հարց է մնում այժմ. ինչպես է ստրուկեների առաջ-

<sup>1)</sup> Lemann—Hartleben, հիշ. աշխ., էջ 1-2:

<sup>2)</sup> App., I, 120 (վերջ)

նորդը մնում առանց ձիու: Ապպիանոսն, ինչպես մենք տեսնում ենք, այս հարցին չի պատասխանում: Այստեղ մենք անխուսափելիորեն վերադառնում ենք Պլուտարքոսի զբամատիկացված «ձիու պատմութեանը»: Վորմիանկարչութեան ֆրագմենտը մեզ բերում է նաև այս հարցի համապատասխան լուծմանը: Բանն այն է, վոր յեթե Ապարտակը, ինչպես այս ցույց է տրված պատկերում, ծանր վիրավորված էր ազդրից, ապա նա չէր կարող ձիու վրա կռվել թշնամու դեմ: Մինչև վիրավորվելը, ձիու վրա նստած նա կարող էր սանձից կամ բաշեց չբռնել, հետևաբար վտուքերով պահպանելով իրանի կայուն դիրքը, Ապարտակի յերկու ձեռքն էլ ազատ ելին թշնամու հետ ճակատամարտելու համար: Իսկ ազդրից խիստ վիրավորվելուց հետո նա պետք է ձեռքով բռներ ձիուց (ինչպես և ցույց է տրված պատկերում): Մի ձեռքն զբաղված էր, և նա չէր կարող հաջողութեամբ շարունակել կռիվը: Ուստի Ապարտակն ստիպված էր թողնել իր ձիւն: Հենց այս մոմենտը, հավանաբար, նկատի ունի Պլուտարքոսը, յերբ մեզ հաղորդում է ձիու եպիզոդը: Այն ժամանակ միանգամայն պարզ է դառնում Ապպիանոսի հաղորդումը, վորի համաձայն ստրուկների առաջնորդը, վիրավորված լինելով ազդրից, ծոնկի յե իջնում: Զիտուց իջնելով, նա դիմադրում է թշնամիների հարձակումներին, վորն, այսպիսով, միանգամայն համերաշխվում է պատկերի հետ: Պլուտարքոսն այս մոմենտն աչքագող չի արել և զբամատիկացնում է այն: Մեր մեկնաբանութեան շնորհիվ կատարյալ համապատասխանութուն է ստեղծվում ինչպես գրական ազդրուրների ցուցմունքների (Ապպիանոս և Պլուտարքոս), այնպես էլ Պոմպեյի վորմիանկարի Ֆրագմենտի տվյալների միջև: Ապարտակի մահվան վերջին մոմենտը կապված է նրա համարյա լրիվ վոչնչացման հետ: Վիրավորված լինելով, Ապարտակը շարունակում էր իր հերոսական կռիվը ծնկների վրա: Սա իսկական մտքով կռվի հոգեվարքն էր: Նա փրկութուն չուներ այլևս: Բնորոշ է ազդրուրների ասածը, վոր Ապարտակի դիակն անկարելի յեր գտնել «Ապարտակի դիակը չգտնվեց»<sup>1)</sup>, ասում է Ապլանոսը, մի տեսակ ասես հուշելով, վոր հոմեոյական կողմից, ըստ յերևույթին, ամեն միջոց ձեռք էր առնվել վորպեսզի գտնվի աստիկ Ապարտակի գեթ դիակը: Բայց նրան չկարողացան գտնել, վորովհետև, Պլուտարքոսի տեղեկութեամբ, «Ապարտակը, շրջապատված մեծ քանակու-

թեամբ թշնամիներով և հերոսաբար հետ մղելով նրանց հարվածները, վերջիվերջո կտոր-կտոր արվեց»<sup>1)</sup>:

Սրանում պայծառ կերպով արտահայտվել է ստրուկատիրական դասակարգի ատելութունն ու ցասումն ստրուկների առաջնորդի վերաբերմամբ:

#### 4. ՍՊԱՐՏԱԿՅԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԿՈՒՎԸ

Վերջին հարցը, վորով մենք ուզում ենք վերջացնել Ապարտակի յերրորդ արշավանքի և նրա մահվան ուսումնասիրութունը, այդ այն հարցն է, թե ինչ վիճակ ունեցան հուշակալոր հերոսի բանակի մնացորդներն որհասական ճակատամարտից հետո: Վոչ մի հետազոտող ուշադրութուն չի դարձրել սրա վրա: Իսկ մեզ համար մի բան պարզ է. ստրուկների առաջնորդի մահվանից հետո նրանց կռիվը շարունակվում էր: Այս առթիվ բոլոր ազբյուրները համերաշխորեն ասում են. կռիվը սրանով չվերջացավ: Որինակ՝ Ապպիանոսն ասում է, թե Կրասոսի հետ վճռական ճակատամարտ ունենալուց և Ապարտակի մահվանից հետո ստրուկները փախան լեռները և, այնտեղ բաժանվելով չորս մասի, շարունակում էին դիմադրել<sup>2)</sup>: Ըստ եյուլթյան նույնն է հաղորդում մեզ նաև Պլուտարքոսը, վորն ուղղակի ասում է, թե Կրասոսին ողնութեան հասած Պոմպեոսին միայն հաջողվեց «արմատախիլ անել պատերազմը»<sup>3)</sup>: Ըստ յերևույթին, Պոմպեոսը դեռ յերկար ժամանակ ստիպված էր հետապնդելու ստրուկներին և շատ ուժ վատնելու սրա վրա, յեթե միայն պատերազմը վերջանալուց հետո Պոմպեոսը նույնիսկ անհրաժեշտ համարեր զեկուցելու սենատին, վոր «Կրասոսն ստրուկներին ջարդեց, բաց ճակատամարտում, իսկ նա, Պոմպեոսը, արմատախիլ արեց պատերազմը»<sup>4)</sup>: Մյուս ազբյուրը՝ Որոգիոսը<sup>5)</sup>, վկայում է այն շուրջկալներին մասին, վոր ստիպված էին «կազմակերպելու ուղղական

<sup>1)</sup> Plut., Crass., 11 (վերջը):

<sup>2)</sup> App., 1, 130

<sup>3)</sup> Plut. Crass., 11:

<sup>4)</sup> Նույն տեղում

<sup>5)</sup> Oros., 5, 24 „Ceteri, qui et hoc Lello japsi oberradent per Conplures duces frequenti indagine attriti sunt“.

չատ առաջնորդները ղեկավարութեամբ», մինչև վոր հաջողվել է հաղթահարել Սպարտակի զորքերը մնացորդները: Ստրկական զորքերը մնացորդներին պատժող այս ուղղմական առաջնորդները թվում կային հռոմեական բավական ակնաւոր գործիչներ: Այսպէս, Սվետոնիոսը մեզ հետաքրքրական վկայութեան է թողել այն մասին, վոր հետագայում սենատի արտակարգ հանձնարարութեամբ ստրուկների զորքերը մնացորդների դեմ կռոււմ էր սպառա կայր Ռզոստոսի հայր Գայ Ոկտավիանոսը: Յեւ զանազան վոր Սվետոնիոսի այս վկայութեամբ Գայ Ոկտավիանոսին հանձնարարված էր ստրուկները ղեկավարները մնացորդները հետ միասին վերացնել նմանապէս և կատարողների մնացորդներին, վորոնց, հայտնի է, թէ ինչ պատճառով, Սվետոնիոսը դատում է ստրուկները շարքը, ապա այստեղից կարելի յէ յեզրակացնել, վոր նույնիսկ Կայսրիւնայի ժամանակաշրջանում, 70-ական թվականների վերջում, սպարտակյանները ղեկա շարունակում էին իրենց կռիվը հռոմեական ստրուկները դեմ: Յեթե նույնիսկ Սպարտակի մահվանից հետո ստրուկները ղեկ յերկար ղեկմանում էին Իտալիայի հարավում և շարունակում կռիվը, ապա բնականորեն հարց է ծագում, թէ վորտեղ էր կատարվում այս կռուիվը, ինչ կետերի մեջ էր այն տեղափակված: Նույն Սվետոնիոսի տեղեկութեանները յերևում է, վոր ստրուկները, չորսնիստի տեղեկութեանները յերևում է, վոր ստրուկները, չորսնիստի սոսի հետ կռիվում հետո նահանջելով հարավ, գրավեցին Փուրբ մարզը (մի շրջան՝ Փուրբ գլխավոր քաղաքով): Յեթե ղեկա կատարիւնայի դավադրութեան ժամանակներն ստրուկները գործում էին այս մարզում, ընդվորում սպառնում էին Հռոմին նոր արշավանքով, այնպէս վոր Սենատն ստիպված էր ուղարկել Գայ Ոկտավիանոսին, ապա այս նշանակում էր, վոր ստրուկները զորաւորները ղեկա մեծ էին: Արդեւ Սպարտակից հետո այս զորքերը քանակի մասին մենք կարող ենք դատել հետեյալից: Յեթե հետո ստրուկները վերջնականապէս պարտվում են, ապա միայն հռոմայեցի ղեկները կարող էին մոտ 3000 մարդ<sup>1)</sup>:

Իսկ անմիջականորեն Իտալիայի հարավում սպարտակյանների մղած կռիվի մասին մենք տեղեկութեաններ քաղում ենք Յիցերոսի ճառերից Վերբեսի դեմ: Յիցերոսի ճառերի մի

1) Oros., V, 24,

շարք տեղերից<sup>1)</sup> ամենից առաջ յերևում է, վոր Իտալիայի հարավում «ստրկական պատերազմի» բռնկումները տեղի յեն ունեցել մշտապէս: Յեւ Վերբեսի դեմ ուղղված մեղադրանքների մեջ էլ թափանցում է միանգամայն վորոշակի միտք, վոր սպարտակյանների մնացորդները կապված էին Սիցիլիայի ստրուկների հետ, վորոնք նոր սպառնալուծութեան էին պատրաստում: Նույնիսկ Վերբեսն, արդարանալով, ստիպված էր հայտարարելու, վոր նրա ծառայութեանը պիտի համարել այն, վոր նա թույլ չտվեց ստրուկներին Իտալիայից գնալու Սիցիլիա<sup>2)</sup>: Հետեւաբար դատի ժամանակները (70 թ. մինչև մեր թվակ.) ստրուկները այսպիսի վորձեր են տեղի ունեցել Իտալիայից անցնելու Սիցիլիա: Այս միտքը հաստատվում է Յիցերոսի մի շարք այլ արտահայտումներով: Որինակ՝ մի տեղ նա ուղղակի հայտարարում է վոր Իտալիայի հարավի ամբողջ արևմտյան ծովափնյա շրջանը Վերբեսից մինչև Վելի գտնվում էր ստրուկների իշխանութեան ներքո: 70 թ. ապրիլին Սիցիլիան շրջագայելուց հետո անվտանգ Հռոմ վերադառնալու և Վերբեսի դեմ բացված դատավարութեանը մասնակցելու համար Յիցերոսն ստիպված էր վորոշ «ճանապարհային արկածներ» ապրելու, վորչափով վոր այն շրջանները, վորոնցով նա պետք է անցներ, գրավել էին ստրուկները: Սիցիլիայից գալով, նա իջավ Ռեգիոնում: Բայց Ռեգիոնից ցածաքով նա կարող էր հասնել միայն մինչև ծովափնյա Վերբես քաղաքը: Իսկ նրանից հետո, Վերբեսից մինչև Վելի այս ամբողջ շրջանն այն ժամանակ (70 թ. դարնանն ու ամառը մինչև մեր թվականը) գտնվում էր սպարտակյան մեծ բանակի մնացորդ ստրուկների իշխանութեան ներքո: Այս պատճառով մեծ հետաքրքրում է Վերբեսի հռչակավոր մեղադրողն ստիպված էր, ի վնաս իր դերքի, ստրուկներից սարսափած փախչել «մի վատ, փոքրիկ նավակով» ծովային ճանապարհով Վերբեսից մինչև Վելի, վորտեղից արդեն կարելի յեր նորից շարունակել ճանապարհը ցամաքով: Ճանապարհի իր այս դժբախտ պատահարը Յիցերոսն այնուհետև վոր մի կերպ չէր կարող ներել Վերբեսին և, իբրև վրեժ, այս մասին նա հիշեցրեց նրան դատավորութեան յերկրորդ նստաշրջանի իր ճառում<sup>3)</sup>:

1) Cicer. in Verr., 2, 99, 136 3, 60—66. 5, 5—20. 40—43

2) Նույն տեղում 5: 6:

3) Նույն տեղում, 2. 99:

Իտալիայի հարավ-արևմտյան ծովափնյա շրջանները զրա-  
ված սպարտակյանները դեռ յերկար ժամանակ պահպանում  
էին իրենց մարտունակութունը և բազմիցս հաջողությամբ հա-  
կահարված տալիս հոռմեյական ստրկատիրական լեզեոնների  
հարձակումներին: Թե ինչպես սպարտակյանները, վոր ունեյին  
կովի, մաներիու հասկայական փորձ, վոր ռազմագիտական ու  
տակտիկական ճարտգութուն ունեյին, նույնիսկ առաջնորդին  
կորցնելուց հետո գիմանում էին հոռմեյական լեզեոնների դեմ  
ճակատամարտ մղելիս, այս մասին մեզ ասում է նույն Յիցերոնը:  
Վերրեսի դեմ բերած իր մեղադրանքներում նա ստիպված էր  
հիշատակելու ստրուկների դեմ կովելիս տեղի ունեցած այսպես  
կոչված «Տեմպսանյան անհաջողութուն» մասին (Tempsanum  
iudicium): Բանն այն է, վոր յերբ Վերրեսը 71 թ. վերջին  
գավառից վերագառնում էր Հուոմ, նա անցավ Վալենսիա (կամ  
Վիրոն) քաղաքով: Այստեղ նա ափ իջավ, թե քաղաք հասավ  
ցամաքով, այնքան էլ կարևորչե: Բայց չափազանց հետաքրք-  
րական է, վոր Վալենսիայից վոչ հեռու ստրուկների մի գո-  
րախումբ զրավում է Տեմպսա (կամ Տեմելա) քաղաքը: Պետք է  
յենթադրել, վոր սա ստրուկների մեծ գորախումբ էր, յեթե  
նրանք, քաղաքը գրավելով, յերկար դիմացան այստեղ և, ինչ-  
պես հետևում է ըստ Յիցերոնի, հաջող հակահարված տվին հոռ-  
մեյական զորքերին: Հարևան վալենսիացի ստրկատերերը շատ  
վախեցան: Նրանք անհանգստացել էին այս «Տեմպսանյան ան-  
հաջողությամբ»: Սակայն, իմանալով, վոր Տեմպսից վոչ հեռու  
գտնվում է Սիցիլիայի փոխարքա Վերրեսը, նրանք մի լեզեոն  
գործ հավաքեցին և խնդրեցին Վերրեսին իր վրա վերցնելու  
հրամանատարութունն սպարտակյան բանակի մնացորդների  
դեմ: Ինչպես յերևում է Յիցերոնից, յերբ Վալենսիա քաղաքի  
պատվիրակութունը ներկայացավ Վերրեսին, վերջինս մերժեց  
նրան: Ըստ յերևութիւն, հետո այս քաղաքն էլ վերցրին ստրուկ-  
ները, վորովհետև այսպես Յիցերոնի համար վոչ մի իմաստ  
չունենի հիշատակելու տեմպսանյան փաստը, իբրև անհաջողու-  
թյուն:

Իսկ մեզ համար արտասովոր չափով հետաքրքրական է այս  
փաստը, վորչափով վոր այն մեզ տալիս է ստրուկների շարու-

նակած կովի եպիդորներից մեկը՝ արդեն նրանց հոչակավոր  
առաջնորդի մահվանից հետո (71 թ. մինչև մեր թվակ.): Այսպես,  
չնայած մի շարք անհաջողութուններին, իսկ գլխավորը՝ իրենց  
զորավարի կորստյան, ստրուկները համառորեն շարունակեցին  
կովել հանուն աղատության: Սպարտակի կերպարանքը և նրա  
համախաղախան մեծ ապստամբութունը հերոսության սիմվոլ է  
իր գաղափարների համար մինչև վերջ կովելու գործում: Յեթե  
բունաարի գիցաբանական առաջին կերպարանքը Պրոմեթևոսն  
էր, ապա առաջին կոնկրետ պատմական պրոմեթևոսը, մարդկանց  
սոցիալական հասարակության մեծ բուռնտարը հանդիսացավ  
Սպարտակը:



<< Ազգային գրադարան



NL0408838

307

ԳԻՆԸ 1 Ռ.